13 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 ԵՐԵՔՇԱԲԹԻ 207 (2411)

Azg

armenian daily

Ավիաաղետ Նյու Յորքի երկնքում

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբերի 12-ին Նյու Յորքում աղետի է ենթարկվել Դոմինիկյան Հանրապետության չվերթի օդանավը: Ականատեսների վկայությամբ, ինքնաթիռի աջ մասում հրդեհ է բռնկվել, այդ օդանավը գտնվելիս է եղել Մանհեթեն Քուինզ կամրջի մոտակայքում: Ինքնաթիռը վայր է ընկել բոցավառված, եւ օրվա ընթացքում հրեշներն ու փրկարարները զբաղված են եղել աղետի վայրից բնակչության էվակուացիայով: 128-րդ փողոցի վրա գտնվող աղետի վայրը շրջափակված է ոստիկաններով: Ականատեսների վկայությամբ, ընկնելիս ինքնաթիռից անջատվել է նաեւ շարժիչը: Քաղաքային իշխանությունները քաղաքացիներին հրամանով փակել են բոլոր թունելները եւ անցումները: Քաղաքում հայտարարված է արտակարգ դրություն, հրեշները հայտնել են, որ կրակի օջախը մեծ չէ, ընդգրկել է ընդամենը 3 տուն: Քաղամասում հիմնականում սեփական տներ են:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Երեւանը չի ընդունի փարիզյան սկզբունքներից շեղվող առաջարկներ

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Քանի դեռ փարիզյան սկզբունքները ուժի մեջ են ու զարգացումները տարվում են դրանց շուրջ, Հայաստանը պատրաստ է շարունակել ինքնակումները» ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման շուրջ: Այս մասին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Նա ընդգծել է, որ պատշաճ Երեւանի համար չեն կարող ընդունելի լինել փարիզյան համաձայնություններից շեղվող առաջարկները:

Պատասխանելով այն հարցին, թե Եվրախորհրդի մասնակցությունը կարգավորմանը արդյոք շեղում չէ՞, Օսկանյանն ասել է, թե Եվրոպայի խորհուրդը ներգրավվում է եվրոպական բոլոր հակամարտությունների կարգավորման մեջ, բայց կարեւոր է, թե ինչպիսին կլինեն զարգացումները Եվրախորհրդում. արդյոք կստեղծվի՞ ԵԱՀԿ Մինսկի խմբին զուգահեռ կառույց, թե՞ ամեն ինչ կմնա ինքնակումների մակարդակում: Ըստ որում, ըստ Վ. Օսկանյանի, եթե բանաձեւերի միջոցով որեւէ լուծում պարտադրվի, ապա դրանցից պետք է խուսափել, որովհետեւ դա կարող է մրցակցության հանգեցնել ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ ԵՄ գործընթացների միջեւ: «Իսկ փորձը ցույց է տալիս, որ մրցակցությունը միշտ էլ բացասական ազդեցություն է ունեցել», ընդգծել է Հայաստանի արտգործնախարարը:

Ինչպես գտնում է Վարդան Օսկանյանը, քանի որ Եվրոպայի Խորհրդում ինքնակումները վարվելու են Խորհրդարանական վեհաժողովի մակարդակով, իսկ խորհրդարանականները միշտ չէ, որ արտահայտում են իրենց երկրի արտաքին քաղաքականությունը, ապա հնարավոր են այլ զարգացումներ, որոնք բացասաբար կազդեն ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացի վրա: Նա նույն վերապահումն արել է նաեւ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ադրիան Սեւերինի առաջարկի նկատմամբ, համաձայն որի հարկավոր է ԵԱՀԿ խորհրդարանական մակարդակով եւս ստեղծել ղարաբաղյան կարգավորմամբ զբաղվող կառույց: Օսկանյանը շեշտել է, թե ոչ միայն Հայաստանի, այլեւ Ադրբեջանի եւ ընդհանրապես միջազգային հանրության համար ղարաբաղյան խնդրին լուծում տվող միակ լիազորված մարմինը ԵԱՀԿ Մինսկի խումբն է: «Բոլոր դեպքերում, ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման իրավասություններ ու մեխանիզմներ ունեցող միակ կազմակերպությունը մնում է ԵԱՀԿ Մինսկի խումբը», հայտարարել է ՀՀ արտգործնախարարը:

ՍՏՈՒԳԱՅՑ

ՀՀ նախագահը սահմանային զորամասերում

Հայաստանի Հանրապետության նախագահ, գեներալ-լեյտենանտ Ռոբերտ Քոչարյանը նոյեմբերի 9-11-ը ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Միխայել Հարությունյանի ուղեկցությամբ այցելել է հանրապետության սահմանները հսկող մի շարք զորամասեր: Այցի նպատակն էր մոտիկից ծանոթանալ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակին, զորամասերի մարտական եւ տակտիկական պատրաստվածությանը, ուսումնական ծրագրերի կատարմանը: Հանրապետության նախագահը առանձնազրույցներ է ունեցել սպաների եւ զինվորների հետ: Ռոբերտ Քոչարյանը հետաքրքրվել է նրանց հուզող խնդիրներով՝ մարտական պատրաստականությունից մինչեւ սոցիալական ոլորտ:

Պայական կազմի հետ խորհրդակցությունների ժամանակ նախագահը, ծանոթանալով զորամասերի մարտական խնդիրներին, նշել է, որ առաջնային եւ երկրորդական խնդիրներ չկան, զինվորական կանոնադրության պահանջները պետք է կատարվեն անշեղորեն: Մանրամասն քննարկվել են առկա խնդիրները, թերությունները եւ դրանց պատճառները: Նախագահը տվել է կոնկրետ հանձնարարականներ՝ նշելով կատարման ժամկետները:

Այցելած բոլոր զորամասերում առավել աչքի ընկած սպաներին եւ զինվորներին Ռոբերտ Քոչարյանը հանձնել է թանկարժեք նվերներ:

Տես էջ 2

«Ադրբեջանի նպատակը հակաահաբեկչական կոալիցիայի երկրների ջանքերը խափանելն է»

«Ազատություն» գործակալության հարցերին պատասխանում է ԼՂՀ անվտանգության խորհրդի քարտուղար Կարեն Բաբուրյանը

– Վերջերս Ադրբեջանում լայն թափ է ստացել Լեռնային Ղարաբաղը որպես ահաբեկչության բույն ներկայացնող քարոզչական արշավը, որ իբր ահաբեկչության դեմ անհրաժեշտ է «հակաահաբեկչական գործողություն» իրականացնել: Միաժամանակ պաշտոնական Բաքուն չի դադարեցնում հակաահաբեկչական կոալիցիայի երկրների օժանդակությունը ստանալու ջանքերը՝ նման գործողության իրականացման համար:

– Ադրբեջանն իրար կողքի է դնում անհամեմատելի երեւույթներ՝ նպատակունենալով արդարացնել Լեռնային Ղարաբաղում ռազմական հակադրության ընթացքում սեփական գործողությունները: Համաշխարհային հասարակայնությանն էլ հայտնի է, որ հենց Ադրբեջանի տարածքում են տեղակայվել ամեն տեսակի ահաբեկիչներ, որոնք այսպես թե այնպես մասնակցություն են ունեցել ռազմական գործողություններին՝ Ադրբեջանի կազմում: Դրանք եւ չեչեն գրոհայիններն են Ռուսաստանում ոչ փիչ արյուն թափած հանրահայտ Շամիլ Բասաեւի գլխավորությամբ, եւ աֆղանական մոջահեդները, եւ թալիբները: Այդ իրադարձություններում հստակ երեւում է Ուսամա բեն Լադենի ձեռքը, ինչի մասին խոսակցություն է եղել նաեւ միջազգային մամուլում:

Կարծում եմ, ձգտելով Լեռնային Ղարաբաղը ներկայացնել որպես ահաբեկչության աղբյուր, Ադրբեջանը հետապնդում է երկակի նպատակ: Մի կողմից՝ ստանալ քարոզչական շահ եւ հերթական անգամ փորձել ղարաբաղյան խնդիրը լուծել ուրիշների ձեռքերով:

Տես էջ 2

Նոր միավորում հանուն անկայունության

Մի շարք վանոյամետ լրագրողուհիներ՝ Շողեր Մաթեւոսյանը, Աննա Իսրայելյանը, նաեւ Արամ Աբրահամյանը, ուրբաթ կհայտարարեն նոր ՀՀՇ-ական միավորում ստեղծելու մասին: Միավորման նպատակն է լինելու սաստել նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներքին եւ արտաքին քաղաքականությանը եւ նրա ցմահ թոշակառությանը: Միավորման պայմանական, դեռեւս աշխատանքային անվանումն է՝ «Շամիրամ 1+»:

Պուտին. Վրաստանում ռմանք մասների արանքով են նայում ահաբեկչությանը

ՄՈՍԿՎԱ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ Վրաստանի որոշակի շրջաններ մասների արանքով են նայում միջազգային ահաբեկիչների գործունեությանը: Վլադիմիր Պուտինը այդ մասին ասել է նոյեմբերի 10-ին Կրեմլում՝ ամերիկյան մի շարք առաջատար լրատվամիջոցների շեֆ-թղթակիցների հետ զրույցի ժամանակ: Ըստ Պուտինի, կասկածի ենթակա չէ, որ վրաց պաշտոնական իշխանությունների թողտվությամբ Վրաստանի եւ Թուրքիայի տարածքով Չեչնիայից Աֆղանստան են տեղափոխվում գրոհայիններ: Բացի այդ, նշել է Պուտինը, «մեզ հավաստի հայտնի է, որ վիրավոր շատ գրոհայիններ աղաչինվում են Վրաստանի հիվանդանոցներում, այդ թվում եւ վրացական բանակի Թբիլիսիի գլխավոր զինվորական հիվանդանոցում»:

Վրաստանի խորհրդարանի առաջին նախագահուհին

ԹԲԻԼԻՍԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ խորհրդարանի խոսնակի պաշտոնը ստանձնեց կին՝ 37-ամյա Նինո Բուրջանիձեն: Վրացի քաղաքագետները նրան դասում են այսպես կոչված «երիտասարդ բարեփոխիչների» ճամբարին, որին պատկանում էր եւ նախկին խոսնակ Զուրաբ Ժվանիան: Մեծապես նրա աջակցությամբ էլ Նինո Բուրջանիձեն կարողացավ հաղթել ծանր ընտրարշավում: Խորհրդարանի վերջորդ նիստը շարունակվեց գրեթե մի ամբողջ օր եւ ավարտվեց նոյեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 4-ին:

ՀՈԱԿ

Մեր երկրի աղագան միջին խավի ստեղծումն է

Նորաստեղծ ակումբներ Ստեփանավանում եւ Տաշիրում

Այրարատից դուրս, հատկապես հեռավոր բնակավայրերում չափումներն ուրիշ են: Քաղաքական, տնտեսական, մշակութային նորությունները տեղ են հասնում միայն ռադիոյով, հեռուստատեսային մեկ-երկու ալիքով, իսկ թերթ մարդիկ չեն գնում. փող չունեն: Եվ սա է պատճառը, որ քաղաքական մի անցան դաշտ է սացվում, ուր կարելի է ամեն մի քաղաքական «քյալագյոզություն» անել: Ցանկացած քաղաքական գործիչ կարող է մտնել, ասենք, Տաշիրի մարզ եւ այնպիսի խաղեր խաղալ, որի հետեւանքներն անկանխատեսելի են: Աշխատունակ տղամարդկանց մի մասն էլ արտագնա աշխատանքի է: Եվ եթե այրարատի բնակիչը, որն անհամեմատ տնտեսական շահեկան վիճակում է, նաեւ քաղաքականությանը շփվում է գրեթե ամեն օր, միջինգային, հեղափոխական ամեն մի

ճառ հավասարակշիռ խոսքի հետ համեմատելու եւ սեփական եզրակացությունն անելու հնարավորություն ունի, ապա մարզերում սպասում են, սպասում են այրարատից եկած մարդկանց, տեղ հասած լուրերին:

Տես էջ 4

ՊՈՒԹԱՑԻԿ

Սկիզբը էջ 1

Մյուս կողմից՝ չի կարելի հաշվի չառնել այն փաստը, որ Ադրբեջանի նման գործողությունները թելադրված են նաեւ այն բանով, որ այդ երկիրը վերջին ժամանակներս բավականին սերտ համագործակցում է իսլամական արմատական կազմակերպությունների հետ: Եվ եթե հարց ծագի, թե ո՞ւմ է հիմա ձեռնտու Ադրբեջանի նման փոռձը, ապա պատասխանը միանշանակ է՝ ահաբեկիչներին, քանզի աշխարհում եւս մեկ լարվածության օջախի ստեղծումը, բնականաբար, կխանգարի հակաահաբեկչական կոալիցիայի միջազգային ահաբեկչության դեմ նպատակամղված պայքարին: Այսինքն մեր տարածաշրջանում իրավիճակի սրումը, լարվածության նոր օջախի ի հայտ գալն այստեղ որեւէ կերպ կանդրադառնա ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության վրա: Բացառված չէ, որ Ադրբեջանն ունի նաեւ նման նպատակ:

- Բախվում ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի հետ հանդիպման ժամանակ Հեյդար Ալիեւը հայտարարեց, որ եթե ԵԱՀԿ-ն սկզբունքային դիրք չգրավի, Ադրբեջանն իր տարածքները կազատագրի ուժային մեթոդով: Ձեր կարծիքով, ինչո՞վ էր թելադրված նման վերջնագրի ներկայացումը միջազգային այդ կազմակերպությանը Մինսկի խմբի համանախագահների՝ տարածաշրջան այցի նախօրեին:

- Հրադադարը դարաբաղյան ճակատում, ինչպես հայտնի է, սկսվել է 1994 թվականից: Կասկած չունեմ, որ եթե Ադրբեջանը վստահ լիներ իր համար բարեհաջող ելքում, ապա ոչ մի միջազգային կազմակերպություն, այդ թվում նաեւ ԵԱՀԿ-ն, նրա նպատակների իրականացման համար խոչընդոտ չէին հանդիսանա: Այստեղ առկա է մի քանի պատճառներով պայմանավորված ամենատարողական հաղթական շանսաժը: Դրանցից մեկը մինչեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելը ԱՄՆ կողմից Ադրբեջանին ուղղակի օգնությունն արգելող 907-րդ ուղղումն է: Հայտնի է, որ ԱՄՆ նախագահն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում դադարեցնել դրա գործողությունը: Ինչ-որ չափով բարձրացրած քարոզչական աղմուկի, ինչպես նաեւ սեփական օդային տարածքն ու օդակայանները հակաահաբեկչական պայքարի համար տրամադրելու պատրաստակամության հայտարարության շնորհիվ Ադրբեջանը որոշ չափով հասավ իր նպատակին:

Դրա հետ մեկտեղ, ես կրկին կցանկանայի ընդգծել, որ իսլամ արմատականների ու ահաբեկիչների հետ սերտ համագործակցող երկիրը չի կարող միանգամից շուռ գալ հակառակ կողմ՝ ոչինչ չտալով այն կողմին, որի հետ նա համագործակցել է նախկինում: Մտածում եմ, այստեղ որպես վճար հանդես է գալիս տարածաշրջանում իրավիճակը կարգավորմանը, եւ մեր անհանգստությունը ադրբեջանական կողմի ռազմատենչ հայտարարությունների կապակցությամբ: Ինչպես հասկացանք, պարոն Սեւերինը եւս նույն կարծիքին է, որ լուրջ չի կարելի ընդունել այն ամենը, ինչ այս կապակցությամբ ասվում է մամուլում:

Նա, իհարկե, չժխտեց Ալիեւի վերջնագրային հայտարարությունը եւ խոստովանեց, որ դա չի նպաստում կառուցողական երկխոսությանը: Կարծում եմ, եւ Ղարաբաղը, եւ Հայաստանը, մենք բոլորս, պետք է ակտիվ աշխատենք այս ուղղությամբ:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

«Ադրբեջանի նպատակը հակաահաբեկչական կոալիցիայի երկրների ջանքերը խափանելն է»

թյան դեմ նպատակամղված պայքարին: Այսինքն մեր տարածաշրջանում իրավիճակի սրումը, լարվածության նոր օջախի ի հայտ գալն այստեղ որեւէ կերպ կանդրադառնա ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության վրա: Բացառված չէ, որ Ադրբեջանն ունի նաեւ նման նպատակ:

- Բախվում ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի հետ հանդիպման ժամանակ Հեյդար Ալիեւը հայտարարեց, որ եթե ԵԱՀԿ-ն սկզբունքային դիրք չգրավի, Ադրբեջանն իր տարածքները կազատագրի ուժային մեթոդով: Ձեր կարծիքով, ինչո՞վ էր թելադրված նման վերջնագրի ներկայացումը միջազգային այդ կազմակերպությանը Մինսկի խմբի համանախագահների՝ տարածաշրջան այցի նախօրեին:

- Հրադադարը դարաբաղյան ճակատում, ինչպես հայտնի է, սկսվել է 1994 թվականից: Կասկած չունեմ, որ եթե Ադրբեջանը վստահ լիներ իր համար բարեհաջող ելքում, ապա ոչ մի միջազգային կազմակերպություն, այդ թվում նաեւ ԵԱՀԿ-ն, նրա նպատակների իրականացման համար խոչընդոտ չէին հանդիսանա: Այստեղ առկա է մի քանի պատճառներով պայմանավորված ամենատարողական հաղթական շանսաժը: Դրանցից մեկը մինչեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելը ԱՄՆ կողմից Ադրբեջանին ուղղակի օգնությունն արգելող 907-րդ ուղղումն է: Հայտնի է, որ ԱՄՆ նախագահն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում դադարեցնել դրա գործողությունը: Ինչ-որ չափով բարձրացրած քարոզչական աղմուկի, ինչպես նաեւ սեփական օդային տարածքն ու օդակայանները հակաահաբեկչական պայքարի համար տրամադրելու պատրաստակամության հայտարարության շնորհիվ Ադրբեջանը որոշ չափով հասավ իր նպատակին:

Դրա հետ մեկտեղ, ես կրկին կցանկանայի ընդգծել, որ իսլամ արմատականների ու ահաբեկիչների հետ սերտ համագործակցող երկիրը չի կարող միանգամից շուռ գալ հակառակ կողմ՝ ոչինչ չտալով այն կողմին, որի հետ նա համագործակցել է նախկինում: Մտածում եմ, այստեղ որպես վճար հանդես է գալիս տարածաշրջանում իրավիճակը

պայթեցնելու փորձը:

- Քանի որ խոսք գնաց 907-րդ ուղղման մասին, Դուք ինչպե՞ս կգնահատեիք դրա գործողությունը:

- Ամերիկյան օրենսդիրների այդ քայլն ամենից առաջ ելնում է ԱՄՆ ազգային անվտանգության շահերից եւ հակաահաբեկչական արշավում Ադրբեջանին ներգրավելուց: Մենք իրատես ենք եւ հասկանում ենք, որ ցանկության դեպքում Ադրբեջանին կարող էին օգնել նաեւ այլ միջոցներով: Զուտ մարդասիրական, բարոյական տեսակետից 907-րդ ուղղումն ունի շատ մեծ նշանակություն, քանզի Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումն Ադրբեջանի կողմից, որը նույնպես պետք է գնահատվի որպես ահաբեկչության ձեւ, շարունակվում է: Այն, ինչ կատարվում է ադրբեջանական ԶԼՄ-ներում, հակահայկական այս հիստերիան ոչ այլ ինչ է, եթե ոչ ահաբեկչություն: Այս կապակցությամբ ես կուզենայի նշել, որ ըստ էության, ահաբեկչության դեմ մենք պայքարում ենք ավելի քան 10 տարի:

- ԵԱՀԿ ԽՎ նախագահ Ադրիան Սեւերինի՝ վերջերս կատարած այցի շրջանակներում տեղի ունեցավ նրա հանդիպումը ԼՂՀ ղեկավարների, այդ թվում նաեւ հանրապետության անվտանգության խորհրդի անդամների հետ: Ներկայացվեցի՞ն արդյոք նրան դարաբաղյան կողմի անհանգստություններն Ադրբեջանի ագրեսիվ հայտարարությունների կապակցությամբ, եւ եթե այո, ինչպիսի՞ն է եղել նրա արձագանքը:

- Բնականաբար, նրան ներկայացվել է մեր հետեւողականությունը հակամարտության խաղաղ

- Հայտնի է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը: Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված ԵԱՀԿ ԽՎ նախագահի այցը տարածաշրջան, խաղաղարար գործընթացում ի՞նչ դերում է իրեն պատկերացնում այս կազմակերպությունը:

- Ճիշտն ասած, Ադրիան Սեւերինն այդ մասին հստակ չասաց, սակայն նշեց, որ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը պետք է իր տեղն ունենա կարգավորման գործընթացում: Նրա կարծիքով, խորհրդարանականները պետք է իրենց ներդրումն ունենան մինսկյան գործընթացում, եւ ԵԱՀԿ ԽՎ-ին հարկ է ակտիվացնել ջանքերն այս ուղղությամբ:

Կուզենայի նշել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի հնարավորություններն սպառված չեն, ինչի մասին ասել են նաեւ համանախագահներն իրենք նոյեմբերի 5-ին Լեռնային Ղարաբաղ կատարած այցի ընթացքում: Մտածում եմ, գործընթացն այդ շրջանակներում կշարունակվի: Թե ում մեղքով է դրա զարգացումն այսօր դադարել, կարծում եմ, ոչ ոքի համար գաղտնիք չէ: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը, ինչպես հայտնի է, բանակցային գործընթացի վերականգնման նպատակով բանակցությունների հիմք ընդունեցին միջազգային միջնորդների վերջին առաջարկությունները: Կրկնում եմ, Մինսկի խմբի ներուժը սպառված չէ, իսկ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները որոշակի նշանակություն չեն ունենա խմբի աշխատանքը շարունակելու համար:

«ԴԵ ՖԱԿՏՈ»

ԱԼԱՎԵՐԴԻ

Նորակառույց Նարեկավանքն օծվեց Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ

Ալավերդու շրջակայքում բազմաթիվ վանական համալիրներ կան՝ Օձուն, Հաղպատ, Սանահին, սակայն հաղթը մինչ այժմ եկեղեցի չի ունեցել: «Մանեւ եւ Վալեխ» պղնձածուլական գործարանի տնօրեն Վալերի Մեջլումյանի բարի կամքով այդ բացը լրացվեց. Ալավերդի հաղթի կենտրոնում վեր է խոյանում Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին:

2000 թ. ամռանը Գարեգին 2-րդ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց «Մանեւ եւ Վալեխ» ընկերության տնօրեն Վալերի Մեջլումյանին եւ օրհնեց մեր քրիստոնեական դարձի հոբելյանական տարում Ալավերդի քաղաքում եկեղեցի կառուցելու նրա որոշումը: Նույն տարվա նոյեմբերի 17-ին՝ Ալավերդու պղնձածուլական գործարանի հիմնադրման 230-ամյակի տոնակատարության օրը, տեղի ունեցավ կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքը: Ընդամենը մեկ տարի պահանջվեց շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար, եւ նոյեմբերի 11-ին Նարեկավանքն օծվեց Գարեգին 2-րդ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ:

Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու գլխավոր ճարտարապետն է Արսեն Առուստամյանը, շինարարն է «Բազմաբեն» ընկերությունը: Եկեղեցին ունի 11 մետր առանցքային լայնություն, 15 մետր երկարություն: Միաժամանակ կարող է տեղավորել 200 մարդու, բայց արեւմտյան մուտքը խորանի ձեւով է, ինչը հնարավորություն է տալիս բազմամարդ արարողությունների ժամանակ ունենալ բացօթյա սրահ: Եկեղեցու կառուցման համար բարերարը ծախսել է 450 հազար ԱՄՆ դոլար:

Հայրենաշինական եւ եկեղեցաշինական գործունեության համար Վեհափառ հայրապետը Վալերի Մեջլումյանին շնորհեց Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն պարգեւը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը:

Եկեղեցու օծման արարողությանը մասնակցում էին հազարավոր ալավերդցիներ, հյուրեր Հայաստանի տարբեր շրջաններից եւ արտերկրից, բարձրաստիճան պատվիրակներ: Նույն օրը Աժ նախագահ Արմեն Խաչատրյանն այցելեց նաեւ Ալավերդու ծննդատուն: Աշխատակիցների խոսքերով, քաղաքում խիստ նվազել է ծնելիությունը: Եթե նախորդ տարիներին տարեկան հազարից ավելի ծնունդ էր լինում, ապա մինչեւ այս տարվերջ այդ թիվը չի անցնի 400-ից: Ծննդատան աշխատակիցները նշում էին, թե վերջին չորս տարիների ընթացքում տարեկան ընդամենը երեք ամիս են աշխատավարձ ստացել, բողոքում էին շենքի վատթար պայմաններից: Աժ նախագահի ֆոնդից Արմեն Խաչատրյանը ծննդատանը հատկացրեց 1 մլն դրամ:

ԼԱՌԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Սբ. Սահակ- Սբ. Մեսրոպ» շքանշան Էդվարդ Միրզոյանին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական կոնդակով հայ մեծանուն կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանին՝ ծննդյան 80-ամյակի առիթով շնորհվեց Հայ առաքելական եկեղեցու «Սբ. Սահակ-Սբ. Մեսրոպ» շքանշանը՝ իբրեւ գնահատանք տաղանդաշատ կոմպոզիտորի ունեցած մեծ վաստակի:

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում շքանշանը հոբելյարին հանդիսավորապես հանձնեց Ամենայն հայոց հայրապետը:

Հանդիսության ընթացքում հնչեցին կոմպոզիտորի ստեղծագործություններից, իրենց կատարումներով մաեստրոյին շնորհավորեցին հանրահայտ երգչուհի Արաքս Դավթյանը, ջութակահար Նիկոլայ Մադոյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի եւ Արարատյան Հայրապետական թեմի երգչախմբերը:

ՀՀ նախագահը սահմանային զորամասերում

Սկիզբը էջ 1

Մարտիկները նախագահին տեղեկացրել են զորամասերում եւ հենակետերում տիրող վիճակի, սոցիալական բարվոք պայմանների մասին:

Զորամասերից մեկում Ռոբերտ Քոչարյանը եւ գեներալ-լեյտենանտ Միխայել Հարությունյանը ներկա են գտնվել նոր զորանոցային համալիրի բացմանը: Ժաղավենի կտրման պատիվը տրվել է հանրապետության նախագահին: Շրջելով նորակառույց համալիրում, Ռոբերտ Քոչարյանը ծանոթացել է շինարարական աշխատանքների կատարման որակին: Բարեխիղճ աշխատանքի համար նախագահը շնորհակալություն է հայտնել շինարարներին, զորամիավորման հրամանատարությանը, լավագույն շինարարներին պարգեւատրել է թանկարժեք նվերով:

Յուրաքանչյուր զորամաս ունի իր մարտական ուղին, եւ փառքով անցած այդ ճանապարհին եղել են նաեւ թանկ կորուստներ: Հանրապետության նախագահը զինված ուժերի սպաների ուղեկցությամբ ծաղիկներ է դրել զորամասի զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանին:

Այցելության հաջորդ վայրը նորաստեղծ փոքրիկ զինվորական ավանն է եղել, ուր նախագահը մասնակցել է զինվորականների բնակարանամուտին: Նորակառույց հարմարավետ բնակարաններով ապահովված սպաներին շնորհավորելով, նախագահը նշել է, որ ամեն ինչ արվում է, որպեսզի հնարավորինս թեթեւ լինեն սպաների կենցաղային պայմանները, չէ որ դա նույնպես բանակի մարտունակությունը բարձրացնող կարեւոր կողմերից է: Ռոբերտ Քոչարյանն այցելել է նաեւ զինվորական հրաձգարան, ուր ականատես է եղել մարտական պատրաստականության ուսուցմանը:

Ծանոթանալով ուսուցման ծրագրերին եւ ուսումնական կրակադաշտի հնարավորություններին, Ռոբերտ Քոչարյանն իր գոհունակությունն է հայտնել հրամանատարությանը եւ նշել, որ մարտավարության բարձրագույն պահանջների հասնելու համար չպետք է բավարարվել ձեռք բերածով:

Այցելելով սահմանային մի շարք հենակետեր, նախագահը ծանոթացել է դիրքային շինարարական աշխատանքների եւ սահմանների պահպանման վիճակին:

Կարճ ժամանակահատվածում սահմանային գոտու ողջ երկայնքով կառուցվել են նոր կայաններ, որոնց շնորհիվ բարելավել են դիրքային ծառայություն կատարող զինվորների ու սպաների կենցաղային պայմանները:

Երկօրյա այցի ժամանակ հանրապետության նախագահը հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու սահմանային հերթապահություն կատարող մի շարք զորամասերի կատարողական կարգապահության մակարդակին, սպաների եւ զինվորների մարտական, տակտիկական ու բարոյահոգեբանական պատրաստականության վիճակին, սպաների եւ նրանց ընտանիքների սոցիալական պայմաններին:

Հանրապետության գերագույն գլխավոր հրամանատարը, ընդհանուր առմամբ գոհունակություն հայտնելով զորամասերի հրամանատարներին, նշել է, որ ձեռք բերած արդյունքներով բավարարվել չի կարելի, բանակի բարձր մարտունակության գաղտնիքը նրա շարունակական զարգացման ու կատարելագործման, անդուլ ուսուցման, մարտատեխնիկական հզոր վերընթացի մեջ է: Այդ ծգտումը կա եւ երբեք չպետք է խամրի:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ
ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՍՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

98-ից ՀՀՇ-ն փորձել է Կարեն Դեմիրճյանին իր նպատակների՞ն ծառայեցնել

Հմայակ Հովհաննիսյանը կապեր է տեսնում «նախկիններ» եւ ներկայիս ՀԺԿ-ի միջեւ

ՀԺԿ-ն, որպես քաղաքական ասպարեզում լուրջ հայց ներկայացնող հեսագա կուսակցություն, ստեղծվեց բացառապես մեկ նպատակով. բացառել նախկինում թույլ տրված բոլոր սխալները եւ, թույլ չտալով նախկինների հեսագա գործունեությունը, հասնել իշխանության: Համենայն դեպս, Կարեն Դեմիրճյանը հետեւողականորեն փորձում էր իր շուրջը համախմբել այնպիսի առողջ ուժերի, որոնք որեւէ առնչություն չունեին «նախկինների» հետ: Դրանով էր պայմանավորված, որ Դեմիրճյանը հասկանալի սոցիալիստական ուժերի մեջ էր տեսնում այդ պոտենցիալը, որոնք գրեթե մոռացվել էին ծայրահեղ լիբերալ ՀՀՇ-ի կողմից:

Ըստ ամենայնի, սակայն, այդ գործընթացն այնքան էլ հեշտությամբ չի ընթացել, որի դրսեւորումներն ի հայտ եկան հենց հոկտեմբերի 27-ից հետո, երբ ակնհայտ դարձավ ՀԺԿ-ի իրականում իրար հետ գաղափարական փիչ առանցքներ ունեցող մարդկանցից կազմված լինելու փաստը: Մասնավորապես իրականության ջրի երես դուրս գալու հետեւանքով էր պայմանավորված այդ կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Հմայակ Հովհաննիսյանի հեռացումը ՀԺԿ-ից: Ըստ Հովհաննիսյանի, մինչեւ Հանրապետական կուսակցության հետ «Միասնություն» դաշինքի ձեւավորումը, ինքը Կարեն Սերոբիչի հետ որեւէ տարաձայնություն չի ունեցել, որովհետեւ տեսել է, թե ինչ նպատակներով է առաջնորդվում, նաեւ ինչ վճռականությամբ է դիմակայում դրսից կուսակցությանն սպառնացող վտանգներին: Իսկ դրանք, ինչպես պարզվում է, զգացվում էին այնտեղից, որտեղից այսօրվա ռեւանշիզմն է սպառնում:

«Միասնության» ցուցակով անցած ՀԺԿ պատգամավորներն այսօր բաժանվել են երկու թեւերի: Մի թեւն այսօր կառավարամետ, վարչապետամետ թեւն է, ի դեմս Արմեն Խաչատրյանի, Գագիկ Ասլանյանի եւ նրանց համախոհների: Մյուս թեւը վանոյամետ թեւն է: Այդ թեւը ղեկավարում է Ստեփան Զաքարյանը՝ Վանոյի «մանկլավիկը»: Այսօր նա ինքնադատում է Մովսես Շահվերդյանին (Հայաստանի սոցիալիստական կուսակցության նախագահ- Գ. Ա.), որն իսկապես Դեմիրճյանի հետ կապ էր պատրաստում 1993-94 թթ.: Այդ մասին ես գիտեմ, քանի որ Դեմիրճյանի հետ մտերիմ էի դեռ 1991 թ.-ից: Եվ այսօր Զաքարյանն ի՞նչ իրավունք ունի գնահատականներ տալու, եթե Մովսես Շահվերդյանին Դեմիրճյանն առաջարկում էր մտնել ՀԺԿ, իսկ Ստեփան Զաքարյանին չէր առաջարկում, չնայած նա ցուցակով անցել է: Պարզապես Զաքարյանի մուտքը ՀԺԿ պայմանավորված էր ՀՀՇ-ի հետ փոխհամաձայնությամբ, քանի որ ՀՀՇ-ն ունի ուժեղ զարգացած քաղաքական եւ տնտեսական համակարգ: Բնականաբար, Դեմիրճյանն էլ որպես քաղաքական գործիչ պետք է հաշվի նստեր փաստի հետ: Բայց դա չէր նշանակում, որ նա համակրում էր այդ ուժին: Եվ մտավախություն ունենալով, որ այդ ուժերը կարող են ներթափանցել կուսակցություն եւ, վերցնել իրենց ձեռքը, Զաքարյանին կուսակցություն չէին ընդունում: ՀՀՇ-ն 1998 թվականից աշխատում էր Կարեն Դեմիրճյանի վրա: Փորձ էր արվում նրան համոզել 98-ի ընտրություններից հետո գրանցվել Շենգավիթի շրջանում եւ մտնել Ազգային ժողով, այնտեղ ստեղծել խումբ Վահագն Խաչատրյանից, Դավիթ Շահնազարյանից եւ մյուսներից բաղկացած: Այսինքն՝ ղեկավարել ՀՀՇ-ի գլխավոր թեւերից մեկը: Եվ մենք երկուսով քննարկեցինք ու մերժեցինք առաջարկը: Սակայն այն մարդիկ, ովքեր ՀԺԿ-ի ցուցակով անցան խորհրդարան եւ ամենաբարձր աթոռներն են զբաղեցնում, Դեմիրճյանին համոզում էին գնալ այդ ճանապարհով: Բայց նա չգնաց», վերհիշում է Հմայակ Հովհանիսյանը:

Թերեւս դրանով էր պայմանավորված, որ այսօրվա ՀԺԿ-ն քաղաքական դաշտում ծայրահեղ դիրքորոշումների կրող է եւ գրեթե միշտ այնտեղ է, որտեղ որոշակի ապակայունացման տարրեր կան: Զարմանալի է, որ իրեն «Պաշտպանենք եւ կառուցենք» կարգախոսի կրողը համարող ՀԺԿ-ն երկիրը պաշտպանում ու կառուցում է հրաժարականի կոչերով, այն դեպքում, երբ կառուցելու ռեալ հնարավորությունն ուներ իշխանություն եղած եւ Ազգային ժողովի գործունեության համար պատասխանատվություն սանձնած ժամանակ: Չէ՞ որ «Միասնության» կողմերի միջեւ 1999-ի ընտրություններից առաջ դեռ հստակ փոխհամաձայնություն էր ստեղծվել, որ կառավարության համար պատասխանատուն հանրապետական կուսակցությունն է, խորհրդարանի համար ժողովրդականը: Թե ինչը կարող էր ՀԺԿ-ին խանգարել աշխատելու, դեռեւս մնում է թերբացահայտված:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Դեբեդում ձկները սատկում ու սատկում են

ԱԼԱՎԵՐԴԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ալավերդի քաղաքի «Անկյուն+3» հեռուստաընկերությունը նոյեմբերի 10-ին լրատվամիջոցներին, հասարակական կազմակերպություններին եւ կուսակցություններին դիմել է համակարգչային բաց նամակով, որում ահազանգում է, որ Դեբեդ գետում ձկների թունավորումները շարունակվում են, եւ մարդիկ պարկերով են հավաքում սատկած ձկները:

Ինչպես արդեն հայտնել ենք, հոկտեմբերի 31-ին Դեբեդում ձկների զանգվածային թունավորում է արձանագրվել: Փաստի առթիվ Լոռու մարզի դատախազությունը քրեական գործ է հարուցել ապօրինի ձկնորսության հոդվածով:

Ծովագյուղցիները «վերականգնել են» գազմատակարարումը

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այս տարվա մայիսից դադարեցված էր Սեւանի տարածաշրջանի Ծովագյուղի գազամատակարարումը, քանի որ 600 բաժանորդների սպառած գազի դիմաց կուտակվել է 560 մլն դրամի պարտք: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի տրամադրած հաղորդագրության համաձայն, վերջերս վերականգնվել էր 130 այն բաժանորդների գազամատակարարումը, որոնք մասամբ վճարումներ կատարել էին: Սակայն, ընդամենը չորսօրյա գազամատակարարման արդյունքում գլխամասային հաշվիչը արձանագրել է գերսպառման ցուցանիշ, ինչը, ըստ մասնագետների, ապօրինի գազօգտագործման հետեւանք է: Իրավիճակի վերլուծության նպատակով գազամատակարարումը դարձյալ ընդհատվել է: Ի պատասխան ծովագյուղցիները, անտեսելով ավտանգության բոլոր կանոնները, կոտրել են գազի բաշխման կայանի փականները եւ այդ ձեւով լուծել իրենց գազամատակարարման հարցը: Կատարվածի կապակցությամբ «Հայռուսգազարդը» դիմել է իրավապահ մարմիններին՝ գործին ընթացք տալու նպատակով:

Հերթական անասնագողություն Նոյեմբերյանում

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբերի լույս 10-ի գիշերը Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ Ոսկեւան գյուղում անհայտ անձինք գողացել են Նարկոմ Ներսիսյանի 8 կովը: Նույն գիշերը Բերդավանում գողացել են Լադիկ Չիլինգարյանի 2 կովը, 1 ցլիկը եւ 1 մոզին: 1999 թ. հոկտեմբերից մինչ օրս Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ գյուղերում արձանագրվել է անասնագողության 26 դեպք, որոնցից ոչ մեկը չի բացահայտվել: Իրավապահների վկայությամբ, գողությունների հետքերը տանում են դեպի Ադրբեջան:

Բաց դռների օր դիաբետով հիվանդների համար

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նոյեմբերի 14-ին Հանրապետական էնդոկրինոլոգիական կենտրոնում հայտարարվում է բաց դռների օր՝ նվիրված դիաբետի օրվան: Ժամը 9-14-ը բոլոր դիաբետով հիվանդները կարող են դիմել հիվանդանոց՝ ստանալու անվճար դեղորայք եւ բժշկական ծառայություն: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ այսօր Հայաստանում գրանցված է մոտ 37.000 դիաբետով հիվանդ: Հիվանդացության աճը կազմում է 4-5 տոկոս, մահացությունը՝ 31,52: Վերջին տարիներին դիտվում է դիաբետի հիվանդացության, հիվանդության բարդության, հաշմանդամության եւ մահացության ցուցանիշների բարձրացում: Հաշվի առնելով այս հանգամանքը, 1999 թվականից շաքարային դիաբետը դիտվում է որպես առողջապահության նախարարության կարեւորագույն խնդիր եւ մշակվել է պետական նպատակային ծրագիր, իսկ դեռեւս 1994 թվականից ՀՀ-ը միացել է Համաշխարհային առողջապահության կազմակերպության եվրոպական ռեգիոնալ բյուրոյի եւ Դիաբետի միջազգային ֆեդերացիայի կողմից ընդունված դիաբետի պրոբլեմի Սենտ-Վինսենտի դեկլարացիային:

«Գրեյթ Վելլին» պատրաստ է գնել Երեւանի կոնյակի գործարանը

Իսկ մինչ այդ՝ «Մենք մեր բրենդը տանում ենք առաջ», ասում է կոնցեռնի նախագահ Տիգրան Արզումանյանը

«Գրեյթ Վելլիի» գլխավոր տնօրեն Տ. Արզումանյանի հավաստմամբ, Երեւանի կոնյակի գործարանի հետ ընկերությունը երբեւէ խնդիր չի ունեցել: ԵԿԳ-ն ինքն անընդմեջ խնդիրներ հարուցել՝ խոչընդոտելով «Գրեյթ Վելլիի» արտադրանքի իրացմանը, կեղծ լուրերով, սխալ գովազդային քաղաքականությամբ, թե հայկական կոնյակը միայն իրենցն է: «Գրեյթ Վելլին» պարբերաբար անդրադառնում է այդ ամենին մամուլում, բայց վստահ է, որ ամեն ինչ պետք է որոշվի ազատ մրցակցության դաշտում, սպառողի ընտրությամբ»: Չնայած «Գրեյթ Վելլիի» երեկվա մամուլի ասուլիսում լրագրողներին բաժանված մամլո հաղորդագրության մեջ գրված այս խաղաղասեր խոսքերին, ընկերության նախագահը երեկ զերծ չմնաց իր մրցակցի հասցեին ուղղված սուր բնորոշումներից ու գնահատականներից: Մասնավորապես, Տիգրան Արզումանյանը հայտարարում է, որ ԵԿԳ-ի գովազդներում ներկայացվում է, թե այդ գործարանը հնագույնն է Հայաստանում՝ հիմնված 1887 թ.-ին՝ Թաիրովի ու Շուստովի կողմից, իսկ իրենց արտադրած կոնյակը միակն է: Իրականում, ըստ Տ. Արզումանյանի ներկայացրած փաստերի, ԵԿԳ-ն հիմնվել է 1953 թ.-ին, իսկ «հնագույն» գործարանը գտնվում է Հրազդան գետի ձիշտ հակառակ կողմում՝ «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատում, որի հետ այսօր «Գրեյթ Վելլին» իրականացնում է համատեղ գործունեություն: Ասել կուզե՝ ամենահինը մենք ենք: Տ. Արզումանյանը պատմեց նաեւ, թե ինչպե՞ս են իրենց խանգարել ու խանգարում ֆրանսիացի սեփականատերերը:



«Ես իրա (թերեւս նկատի ուներ՝ «Պեռնո Ռիկարի»- Գ. Մ.) պոլիտիկան իզուչաս եմ արել, որ երկիր որ մտնում ա, ուզում ա էդ երկրի ամենաուժեղ բրենդը իրա սեփականությունը անա», ասում է Տ. Արզումանյանը՝ հայրենի Քյավառի բարբառով, բայց դա չի վախեցնում երիտասարդ գործարարին, որն իր խոսքերով ասած, իր «բրենդն» է առաջ տանում, ասել կուզե՝ զարգացնում կոնյակի արտադրությունը, եւ ոչ միայն կոնյակի, նաեւ՝ գինու: Այսպես, ըստ մամլո հաղորդագրության (սիրելի՝ եթե թվերն ու փաստերը մամլո հաղորդագրությունից մեջբերել, քանի որ պրն Արզումանյանը շատ խառն ու ոչ հստակ էր խոսում- Գ. Մ.), հիմնվելով 1997 թ.-ին, «Գրեյթ Վելլին» արդեն դարձել է կոնցեռն՝ 6 մլն դոլար կանոնադիր կապիտալով, որի կազմում են «Գրեյթ Արարատ» ընկերությունը, Օշականի, Աշտարակի, էջմիածնի գինու գործարանները եւ Արտաշատի գինու-կոնյակի գործարանը: «Գրեյթ Վելլին» արտադրում է 12 տեսակի ավելի սովորական ու տեսակավոր կոնյակներ, շուտով կսկսվի «Տիգրան արքա» (որն ամենահայտնի կոնյակն է ու արժանացել է 10 ոսկե մեդալի, 5 գրանպրիի եւ 1 սուպեր գրանպրի մրցանակների) կոնյակի նոր շարքի թողարկումը: «Գրեյթ Վելլիի» թիվ մեկ շուկան Ռուսաստանն է: «Ըստ ռուսական վերլուծական գործակալությունների՝ այս ընկերությունը ժողովրդականությամբ գերազանցում է ԵԿԳ-ի արտադրանքին», տեղեկացնում է մամլո հաղորդագրությունը: Երբ լրագրողներից մեկը մեջբերեց ռուսական մի վերլուծական հանդեսի՝ «Մոսկովսկիյ էքսպերտի» տվյալները, թե ռուսական շուկայում իրացվող կոնյակի 16 տոկոսը բաժին է ընկնում ԵԿԳ-ին եւ միայն 4 տոկոսը՝ «Գրեյթ Արարատին», պրն Արզումանյանը փորձեց չհամաձայնել, նշելով մամլային ու այլ «նրբությունների» մասին: Ըստ նրա, «Գրեյթ Արարատի» արտադրանքի ծավալները 2 տոկոսով անցել են ԵԿԳ-ից (թե ո՞ր ժամանակահատվածի համեմատ, այդպես էլ չհասկացվեց- Գ. Մ.): Բացի Ռուսաստանից, «Գրեյթի» կոնյակները արտահանվում են նաեւ ԱՄՆ, Կուբա, իսկ Մերձբալթիկայում ու Բելառուսում ընկերությունը հայկական կոնյակի իրացման ծավալներով առաջինն է: Վերջերս ներկայացուցչություն է բացվել նաեւ Չինաստանում: Ու չնայած սրան, պարզվում է, որ «Գրեյթ Վելլին» անցյալ տարիների համեմատ ընդամենը 5700 տոննա խաղող է մթերել, որի դիմաց չի վճարել գյուղացիներին, ինչի մասին, ի դեպ, վերջերս մի հարցազրույցում մատնանշել էր նաեւ ԵԿԳ-ի նախագահ Պիեռ Լառեյը:

Տիգրան Արզումանյանը դա բացատրում է վերջին 9 ամիսներին ընկերությունում ստեղծված վիճակով, երբ լուծվում էր ընկերության գործընկերների բաժնետոմսերի մասնաբաժինների հարցը: Դրա վերաբերյալ, առաջին, վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններով անցնելուց հետո, օրերս վերջնական որոշում է կայացվել: Դրանով է բացատրում նաեւ «Գրեյթ Վելլիի» նախագահը «Արդշինբանկի» հայցով դատարանի կողմից իրենց սնանկ ճանաչելու մասին հարցը: Բանկից վերցված վարկը չէին կարող վերադարձնել, քանի որ ընկերության բոլոր հաշիվները կալանքի տակ էին: Տ. Արզումանյանը հույս ունի, որ դրանք կալանքից կազատվեն, ու իրենք կվճարեն նաեւ գյուղացիներին: Այլապես Պ. Լառեյին խորհուրդ է տալիս. «Եթե իմ պարտավորությունները իրեն է տվել, թող գա պարտքը փակի»: Ընդհանրապես, Տ. Արզումանյանի ասածներից հասկացվեց, որ «Պեռնո Ռիկարը» աչք ունի «Գրեյթ Վելլիի» վրա, նույնիսկ Պիեռ Լառեյը առաջարկել է գնել, բայց Տ. Արզումանյանը ոչ մի կերպ չի համաձայնի, այլ՝ 180 աստիճանով հակառակը, իրենց ընկերությունը ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, պատրաստ է գնել ԵԿԳ-ն: Իսկ թե ի՞նչ գնով, «Ազգի» հարցին ի պատասխան նշվեց. «50 մլն դոլարով»: Այսպիսով՝ ամանորյա սեզոնից առաջ հայաստանյան երկու կոնյակարտադրողների միջեւ կրքերը թեժանում են:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Զեռադրակարգ

Միամիտ հեռանկարություն քաղաքական ենթատեքստով

Կոռուպցիայի ախտը մեր մեջ է, մեզ հետ եւ մեր կողքին

«Ընչազուրկ ժողովրդից» գեթ մեկը հարցրե՞լ է ազգափրկիչներին, թե ի՞նչ միջոցներ են տարբնում համազավառական արշավներ ու միտինգներ կազմակերպելիս

Չեմ ասի, թե նաեւ ես եմ հմտացած կոռուպցիայի բացահայտումներում: Սակայն կան երեւույթներ, որոնք «խորասույզ տեղումներ» չեն պահանջում, ինչպես ասում են, ջրի երեսին են:

Օրինակ հարցնենք՝ ի՞նչ եկամուտներով են ապրում եւ ի՞նչ փողերով են քաղաքական շուներ (համազավառական արշավներ, համաժողովրդական միտինգներ ու ստորագրահավաքներ...) կազմակերպում ներկայիս ազգափրկիչները: Վերցնենք Մանուչարյանին, Բազեյանին, Սարգսյանին, Դեմիրճյանին եւ անգամ Մաթեյանին կամ Սաղոյանին... Ինձ, իհարկե, կարող են ասել՝ էդ ի՞նչ գործն է: Ես էլ կասեմ՝ հենց իմ գործն է. մի կողմից՝ շարքային հարկատու եմ, մյուս կողմից... Չէ՞ որ արդարություն ու ազնվություն պահանջող այս գործիչները՝ հրապարակային քաղաքական դեմքեր են, ուրեմն պիտի ապրեն թափանցիկ, հասարակությունն էլ տեղյակ լինի առաջնորդների թե զբաղվածության, թե եկամուտների ու ծախսերի մասին:

Հանրահայտ է, որ Գեղամյանն ու Սաղոյանը պատգամավորներ են, ու նրանց թափանցիկ ամսական եկամուտների չափը քաղաքական խոշոր ծեռնարկումների կտրվածքով ողբերգական է՝ գրեթե համարժեք 400 դոլարի:

Մանուչարյանը, Բազեյանը եւ անգամ Մաթեյանը կարծես թե գործազուրկ են, այսինքն թափանցիկ եկամտից զուրկ: Ինչ մնում է Դեմիրճյանին ու Սարգսյանին... Առաջինը «Սարս» գործարանի տնօրենը լինելով, դժվար թե ասողաբախական աշխատավարձի տեր լինի՝ գործարանն աշխատում է կարողությունների չնչին հզորությամբ: Սարգսյան Արամն էլ, ինչպես հայտնի է, մինչեւ վերջին օրն «Արարատցեմենտ» գործարանի տնօրենն էր: Մի գործարանի, որը «ծոծռում» է պարտքերի մեջ: Ի՞նչ աշխատավարձ պետք է ակնկալել նման պայմաններում: Սակայն, կարծում եմ, Սարգսյանի նյութականն էլ ավելի վատթարացավ՝ ազատվելով տնօրենի պաշտոնից՝ մարդը դարձավ գործազուրկ:

Գուցե ժողովո՞ւրդն է հանգանակում

Դա անհնարին է, քանի որ, ըստ արմատական ընդդիմության առաջնորդների, ժողովրդի 90 տոկոսն ընչազուրկ է եւ կանգնած անդունդի եզրին (ինչին ես համամիտ եմ, բացի տոկոսաչափից եւ անդունդից): Վարկածը մի այլ խոցելի տեղ էլ՝ ունի: Ո՞ր մի առաջնորդ ուժի համար հանգանակի խեղճ ժողովուրդը, եթե նույն գյուղն ու քաղաքն են արշավում մեկ Մանուչարյանն իր «ճակատով» (ի դեմ, ո՞ւր է «ճակատը»), մեկ Գեղամյանն իր «Ազգային միաբանությունով», մեկ՝ Բազեյանն ու Սարգսյանն իրենց «Հանրապետությունով»: Բայց չէ՞ որ, դրանցից զատ, գյուղ ու քաղաք ժամանակ առ ժամանակ այցելում է ոչ պակաս արմատական Հայկոմկուսը, որը, համաձայնեք, հենց ինքն է ընչազուրկների դրոշակակիրը, այսինքն՝ ընչազուրկ է «ի պաշտոնե» եւ հանգանակության կարիք զգացող:

Թերեւս կա եւս մի խոցելի պահ: Հաշվի առնելով, որ Քոչարյանի դավադիր քաղաքականության հետեւանքով Հայաստանում մնացել է մի բուռ հայ, ու նաեւ այն, որ ժողովրդի անունից խոսող կուսակցությունները պատեհ ու անպատեհ առիթներով մատնացույց են անում առնվազն 30 հազարանոց շարքային՝ների բանակը, ստացվում է, որ Հայաստանի ամեն մի քաղաքացի ինչ-որ ընդդիմադիր կուսակցության անդամ է: էլ ո՞նց հանգանակես մերձավոր քաղուժերին...

Իսկ անդամավճարնե՞րը

Նաեւ այս հարցն է հետաքրքիր, սակայն նորից գալիս է ու դեմ առնում խոչընդոտին՝ ընչազուրկ ժողովրդին: Բանն այն է, որ ի տարբերություն աջերի՝ ձախ կամ անհասկանալի քաղաքական ուղղվածություն ունեցող ուժերը սովորաբար ընչազուրկ էլեկտորատին են ապավինում ու առաջնորդում: Ասածս կեցվածքն էլ նյութական բարդույթներ է առաջ բերում: Օրինակ, ասենք, եթե ՀՌԱԿ-ն իր ակումբներին ինքնաֆինանսավորում է պարտադրում, իսկ կուսանդամն ամսական 500 դրամի չափով անդամավճար է մուծում, ապա ամբոխավարությամբ զբաղվող ուժերը նման քայլի դիմել չեն կարող: Որպես ազգափրկիչ, սրանք իրենք են խոսանում վաղը քաղցածներին կերակրել, անտուններին տնավորել, գործազուրկներին գործի դնել: էլ ինչ անդամավճար՝ այն էլ 500 դրամի չափով:

Մեփական ունեցվածքի վաճառում, տնեցիների ու հարազատների եկամտի փոփոխում

Կյանքի իրավունք ունեն նաեւ այս վարկածները: Ենթադրենք, մեր ազգափրկիչներն ի սկզբանե դառը քրտինքով աշխատած (միայն այսպես՝ չէ՞ որ մաքուր քաղաքականությունը մաքուր խղճով ու ձեռքով է արվում) ունեցվածքի տեր են: Կամ, ենթադրենք, այդպիսի կարողության տեր են տնեցիներն ու բարեկամները: Եվ ահա եղած-չեղածը մատաղ է արվում ազգափրկյալ՝ սուրբ գործին:

Իսկ եթե սույն գործիչները տանուլ տվեցի՞ն: Ի՞նչ է անելու ընչազուրկ տոհմածառը:

Սարսափեցնող այս տեսարանին չեմ էլ ուզում անդրադառնալ՝ լավ գիտակցելով, որ վարկածը մտացածին է:

Վարկած «սվերային», կես առաջին

Ձուրը բերել է, ջուրը՝ տարել, ասում է ժողովուրդը: Այլ դեպքում է, եթե ջրով բերածն են քամուն (այսինքն՝ քաղաքական նոպատակներին) տալիս: Բայց այս կարգի ունեցվածքի տերերն ի՞նչ գործ կարող են ունենալ ընչազուրկ ժողովրդի հետ: Չէ՞ որ հենց սրանք են ժողովրդի ընչազրկության պատճառը... Տվյալ դեպքում պետք է խոսել պարզունակ խաբեության մասին՝ նոպատակաուղղված մեկը վատնելով տասը ծեռք բերել Քոչարյանի գնալուց հետո:

...եւ երկրորդ

Վարկածներից դուրս մնաց եկամուտների վերջին հավանական աղբյուրը՝ այլ ունեւորների հանգանակությունը:

Այս տիպի եկամուտն ընդունելի է, եթե հանգանակությունը սվերային չէ, այսինքն՝ հայտարարված ու հարկված: Հարգելի ժողովուրդ, լսե՞լ եք գեթ մեկ բարեբարի ֆինանսական աջակցության մասին պարոններ Մանուչարյանի, Բազեյանի, Գեղամյանի, Դեմիրճյանի, Մաթեյանի սուրբ գործին:

Ես՝ չէ: Չեմ էլ տեսել սրանց միտինգային բեմահարթակներում այնպիսի անձանց, ովքեր իսկապես թափանցիկ մեծահարուստ են եւ բաց ճակատով ներկայանում են որպես այդպիսին:

Մնացյալը սվեր է, հիմնված «Դու ինձ, ես՝ քեզ» կամ «Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես» բանաձեւերին՝ կոռուպցիայի հայտնի ախտորոշիչներին:

Թողնում եմ ընթերցողին գլուխկոտրուկի բանալին: Ինքներդ որոշեք, թե որ թվարկված ֆինանսական աղբյուրներից են օգտվում մեր ազգափրկիչները՝ համագավառական ուղեւորություններ, համաժողովրդական ստորագրահավաքներ ու միտինգներ կազմակերպելիս՝ պահ անգամ չմոռանալով հանդերձ, որ սվերային տարբերակներից ցանկացածը երկիր ու տնտեսություն քանդող, ժողովրդին ընչազուրկ դարձնող ախտերից է:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հ. Գ. Եթե սույն հրապարակումը հավակնում է դիտվելու որպես հետաքննություն, խնդրում եմ հետաքննող լրագրողների ընկերակցությանը ընդունել ինձ՝ Արսեն Գեւորգի Գեւորգյանիս, ՀԼԸ շարքերը:

ՀՈԱԿ

Մեր երկրի ապագան միջին խավի ստեղծումն է

Նորաստեղծ ակումբներ Ստեփանավանում եւ Տաշիրում

Սկիզբը էջ 1

Այս համոզմանը եկանք, երբ երկու օր առաջ ՀՌԱԿ վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանի եւ ՀՌԱԿ գործիչ Կարեն Կակոյանի հետ եղանք Ստեփանավանում եւ Տաշիրում: Այս բնակավայրերում ստեղծվեցին ՀՌԱԿ ակումբներ, կուսակցության շարքերն ընդունվեցին նորագիրներ: Հետաքրքիր մի փաստ արձանագրեցինք Ստեփանավանում: «Ստեփանավան» ակումբի ատենապետ, Ստեփանավանի Վահան Թեքեյանի անվան թիվ 6 դպրոցի տնօրեն Վլադիմիր Մարտիրոսյանը նախապես հայտնեց, որ այս անգամ կուսակցության անդամ դառնալու ցանկություն է հայտնել 14 մարդ: Սակայն մի քանիսն էլ ցանկանում են ներկա գտնվել ՀՌԱԿ վարչության գործիչների հանդիպմանը: Հարցեր ունեին, որոնց պատասխաններն էին ուզում ստանալ: ՀՌԱԿ վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանը ներկաներին ծանոթացրեց կուսակցության պատմությանը, նրա այսօրվա գործունեությանը, ծրագրերին: Հեղափոխական ամեն մի գործունեությունից զերծ մնացող կուսակցությունը ցանկանում է այնպիսի մի երկիր տեսնել, որում կվերանա ծայրահեղ աղքատությունը եւ դրան հակակշիռ չեն լինի մի քանի անչափ մեծահարուստներ: «Մեր երկրի ապագան միջին խավի ստեղծումն է, ասաց Գ. Հովակիմյանը, այնպիսի մի երկիր, որում հնարավոր կլինի աշխատանքով ապահովել ամեն մեկին: Դրա ուղին միակն է՝ տնտեսական ազատ գործունեության դաշտը, ուր ամեն մեկը հնարավորություն կունենա դրսեւորելու իր ունակությունները, ուր կլաներ չեն լինի, օրենքը պարտադիր կլինի ամեն մեկի համար, եւ այդ օրենքը ստեղծագործական աշխատանքի խթանիչ կլինի»: Բազմաթիվ հարցեր եղան ու այդ հարցերի պատասխանները: Եվ հենց այդ ժամանակ էլ կուսակցության անդամ դառնալ ցանկացողների թիվն ավելացավ եւս երկուսով:

Տաշյանա Տարաշչենկոն ծնվել եւ ապրել է Ստեփանավանում: Նա իրեն բնիկ ստեփանավանցի է համարում: Երիտասարդ այս կինը փորձության նույն ճանապարհն է անցել, ինչ Հայաստանից գնացած շատ ու շատ մարդիկ: Եվ պատահական չէ, որ մեկ տարի Ռուսաստանում ապրելուց հետո վերադարձել է Ստեփանավան՝ այստեղից այլեւս չհեռանալու անխախտ որոշումով: «Համոզված եմ, որ մեզ մոտ՝ Ստեփանավանում նույնպես լավ օրեր կգան: Դա է հաստատում ՀՌԱԿ կուսակցությունը՝ հայկական ազգային մի կուսակցություն, որի անդամն եմ արդեն ես: Հավատում եմ իմ ընտրությանը, գիտեմ, որ այս կուսակցությունն իսկապես մտահոգված է Հայաստանի ապագայով, հայերի, Հայաստանում ապրող բոլոր օտարազգիների ապագայով»: Տաշյանա Տարաշչենկոն հավատացած է, որ նորանոր մարդիկ, այդ թվում նաեւ՝ օտարազգիներ, կանդամագրվեն այս կուսակցությանը:

Եթե Լոռու մարզը, Ստեփանավան քաղաքը մայրաքաղաքի հետ կապվելու ավելի մեծ հնարավորություններ ունեն, ապա նույնը չի կարելի ասել Տաշիր քաղաքի մասին: Հիմնականում հայ եւ ռուս ազգաբնակչություն ունեցող նախկին Կալինինոն այսօր նոր ժամանակներ է ապրում: Թիվ 1 դպրոցի տնօրեն, քաղաքի ավագանու անդամ Արշակ (Աշիկ) Պետրոսյանը հայտնեց, որ նախկինում 10 հազար բնակչություն ունեցող քաղաքից այսօր միայն մեկ երրորդն է մնացել տեղում: «Վերջին 10 տարիների ընթացքում այստեղ հսկայական ավերումներ եղան, թալանվեցին ու ոչնչացվեցին արտադրական շատ կարողություններ: Եվ եթե այսօր տաշիրցիները մի քանի տասնյակ աշխատատեղ ունեն, ապա՝ ի պատիվ գործարարներ Ժորա Բարոյանի եւ Խաչիկ Դումիկյանի, որոնք շարունակում են ավանդական պանրագործական արտադրությունը: Մարդկանց հավաքը պետք է վերականգնել»:

Տաշիրցիները շատ ու շատ հարցերի պատասխաններ էին ուզում ստանալ: Հատկապես շատ էր հետաքրքրում այն հարցը, թե ինչու Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը հանդես եկավ 2003 թվականին անցկացվելիք Հայաստանի նախագահական ընտրություններում երկրի այսօրվա նախագահ Ռոբերտ Քոչարյանի թեկնածության պատասխանությամբ:

– Նախ՝ մեր ընդդիմադիրները մեզ մեղադրեցին այն բանի համար, որ մենք պատասխանեցինք նախագահ Ռոբերտ Քոչարյանին,- հարցին պատասխանեց ՀՌԱԿ վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանը: – Քավ լիցի, նախագահն ինքը պատասխանության կարիք չունի, անհրաժեշտության դեպքում ինքը կարող է Հայաստանի ցանկացած քաղաքացու պատասխանել: Մենք ուղղակի պատասխանեցինք նրա մտադրությունը իր թեկնածությունն առաջադրելու կապակցությամբ: Ասեմ, թե ինչու գնացինք այդ քայլին: Արդեն 100 տարուց ավելի կենսագրություն ունեցող մեր կուսակցությունը պատասխանում է Հայ դատի խնդիրը ողջ աշխարհում, եւ ռամկավարները, հայկական ավանդական մյուս կուսակցությունների հետ, մեծ հաջողություններ են հասել: Մեր երկրի նախկին նախագահի օրոք ազգային գաղափարախոսությունը համարվում էր կեղծ կաստեգորիա: Ընդհուպ հասան այնպիսի ծայրահեղության, որ սովետական ռեժիմ եւ ռուս մարդու կերպարը նույնացվեցին: Ռամկավար Ազատական կուսակցությունը չէր կարող համաձայնել այսպիսի գաղափարախոսությանը: Ի տարբերություն նախկին նախագահի, այսօրվա մեր նախագահը ամենաբարձր ամբիոնից՝ ՄԱԿ-ում, հնչեցրեց Հայ դատի խնդիրը: Ավելին կարող եմ ասել: Հիշում եք, իհարկե, մեր արտաքին գործոց նախկին նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանին՝ շատ ազնիվ, պարկեշտ եւ հայրենասեր մի հայ մարդ, որն աշխատանքից հեռացվեց սոսկ մի հայտարարության համար: Այսօրվա նախագահը Հայ դատի խնդրի լուծումն է պահանջում, շեշտում եմ՝ չի խնդրում, չի աղաչում, այլ պահանջում է: Ղարաբաղյան հիմնահարցը բազմիցս շահարկվել եւ շահարկվում է: Բայց եկեք անկողմնակալ դիտենք՝ եղած փաստերը: Ռոբերտ Քոչարյանն ամենաբարձր կարգի հանդիպումներում, ամենադժվար բանակցություններում շարունակում է պաշտպանել Արցախի խնդիրը, որպես Հայ դատի խնդրի անբաժանելի մի մաս: Ան այսօր, անկախ այն բանից, թե Ալիեւն ինչ է ասում, մյուսներն ինչ են ասում, Ռոբերտ Քոչարյանը որեւէ զիջման չի գնում: Երրորդը. ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ 8 տարի շարունակ թալանված Հայաստանի տնտեսությունը, շատ ու շատ գործարաններ, արդյունաբերական ձեռնարկություններ վաճառվեցին պարսիկներին ու թուրքերին: Այստեղից դուրս հանված պղինձը գնում էր Թուրքիա, դառնում գնդակ եւ ուղարկվում իմ դեմ, քո դեմ: Ի՞նչ է, նախկին նախագահի օրոք չգիտե՞ին, թե պղինձն ուր է գնում եւ ինչ է դառնում... Այսօր տնտեսությունը թեեւ դանդաղ, բայց վերականգնվում է: Այս քաղաքականության ընդդիմախոսներ, իհարկե, կան: Բայց ովքե՞ր են նրանք. իշխանական, ասել կուզի՝ տնտեսական լծակներից զրկվածներն են եւ նրանց ժառանգները: Հասկանալի է, որ նրանք վրեժի բարդույթ ունեն: Հիմա նրանք միտինգներ են անում: Բայց ի՞նչ են ասում, ի՞նչ ծրագիր են առաջարկում: Ոչինչ, կոնկրետ ոչ մի բան: Հենց այս է պատճառը, որ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը պատասխանում է երկրի ներկայիս նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որը պատասխանում է Հայաստանում կատարվող ամեն մի ներդրում եւ ներդնողի:

Տաշիրցիներին շատ էր հետաքրքրում այն հարցի պատասխանը, թե ՀՌԱԿ-ն ինչպես է վերաբերվում հոկտեմբերի 27-ի ողբերգությանը: Կուսակցության վերաբերմունքը պարզորոշ է, դա ռեւանշիզմի իշխանության վերադառնալու փորձ էր, եւ Նաիրի Հունանյանի ոճրագործների խումբը միայն իշխանությունը կորցրած մարդկանց ձեռքին գործիք է եղել:

Հարցեր շատ կային, որոնց պատասխանները տեղում տրվեցին: Եվ պատահական չէր, որ ՀՌԱԿ նորաստեղծ «Տաշիր» ակումբում (ատենապետ՝ Արշակ Պետրոսյան) մեկ օրում տասից ավելի նորագիրներ եղան:

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Միջազգային

Եվրոպական երկրները չեն թողնում, որ Թուրքիան Եվրոպայից օտարվի

Բայց չեն էլ հանդուրժում Եվրամիությանը նրա անդամակցությունը

Այն օրերին, երբ Թուրքիայի նախագահ Սիմեդ Նեջդեթ Սեզերը պաշտոնական հանդիպումներ էր ունենում Դուբանբեում եւ Թբիլիսիում, արտգործնախարար Իսմայիլ Ջեմը այցելեց Աթենք: Եթե Սեզերն իր երջագայության ընթացքում ճնարկում էր Աֆղանստանի հետագա ճակատագրին առնչվող խնդիրներ եւ որոնում նախագահ էդուարդ Շեւարդնաձեին Թուրքիայի քաղաքական աջակցության ուղիները, Ջեմն Աթենքում Գեորգիոս Պապանդրեուի հետ ապարդյուն փորձեր էր կատարում հաղթահարելու կիպրական հիմնախնդրի կարգավորմանն առնչվող հակասությունները:

Կիպրոսի հիմնահարցը թուրք-հունական երկկողմ հարաբերությունների լիակատար բարելավման թերեւս գլխավոր խոչընդոտն է: Քանի որ Եվրախորհրդարանը, մերժելով Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիային որպես Եվրամիությանն անդամակցության նախապայման առաջադրելու դրույթը, վերջինից պահանջում է Կիպրոսի հարցում բարելավել իր դիրքորոշումը, ուստի հարցը միանգամայն դառնում է ԵՄ-Թուրքիա հարաբերությունների խոչընդոտը: Ավելին, Թուրքիան դուրս է մղվել ԵՄ-ի անդամակցությանը թեկնածու երկրների ցուցակից, իսկ Կիպրոսի Հանրապետությունը ոչ միայն ցուցակում է, այլեւ նրա անդամակցության հարցը շարունակվում է ակտիվորեն արծարծվել Եվրախորհրդարանում:

Հույները կիպրական հարցի լուծումը պայմանավորում են ԵՄ-ին Կիպրոսի Հանրապետության անդամակցությամբ եւ դա համարում են այդ փոքրիկ պետության միասնականության եւ տարածքային ամբողջականության վերականգնման ամենաարդյունավետ միջոցը: Թուրքերը դրան հակադրում են կղզու տարածքում երկու առանձին պետության գոյության մասին իրենց տեսակետները եւ պահանջում, որ հունական հատվածի անդամակցության դեպքում պետք է ԵՄ-ին անդամակցի նաեւ այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը: Այլ կերպ, Թուրքիան չի ճանաչում առանձին Կիպրոսի Հանրապետության գոյությունը, նույնացնելով դա «հունական հատվածի» հետ, իսկ Հունաստանը որպես այդպիսին, մերժում է «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությանը»: Մերժման հարցում Հունաստանին են միանում եվրոպական երկրները: Այսպիսով, կիպրական հիմնախնդիրը կանխարգելիչ գործոնի նշանակություն է ձեռք բերում ինչպես թուրք-հունական, այնպես էլ ԵՄ-Թուրքիա հարաբերություններում:

ԵՄ-ին Կիպրոսի Հանրապետության անդամակցությունը որքա՞ն կնպաստի նրա միասնականության ու տարածքային ամբողջականության վերականգնմանը, դժվար է ասել: Ակնհայտ են սակայն թուրքերի սպառնալիքները, թե ԵՄ-ին Կիպրոսի անդամակցության դեպքում Թուրքիան իրեն կկցի «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը»:

Այս ամենի առումով պատահական չէին Աթենքում Թուրքիայի արտգործնախարար Ջեմի հետեւյալ խոսքերը. «Կիպրոսում իրատեսական լուծումը կոնֆեդերացիայի ստեղծումն է: Կիպրոսի Հանրապետության անդամակցությունը ԵՄ-ին մեծ խնդիրներ առաջ կբերի»: Չի կարելի պատահական համարել հույն լրագրողների «Թուրքիան Կիպրոսի պատճառով կարո՞ղ է Եվրամիությունից հրաժարվել» հարցը, Ջեմի պատասխանն առավել եւս:

«Մենք ոչ մի գնով չենք հրաժարվի Կիպրոսից»:

Ակամա հարց է ծագում, իսկ ԵՄ-ին անդամակցության համար Կիպրոսի հարցի նկատմամբ իր դիրքորոշումը բարելավելու Թուրքիային առաջադրվող նախապայմա՞նը: Հարցի պատասխանն այսօր Բրյուսելում կտա Եվրահանձնաժողովը հրապարակելով Թուրքիայի առնչությամբ նոր զեկուցագիրը: Նոյեմբերի 9-ին թուրքական պետհեղուսատեսությունն անդրադառնալով Իսմայիլ Ջեմի Հունաստան կատարած այցին, անդրադարձավ նաեւ զեկուցագրին: Ի դեպ, նշենք, որ պետհեղուսատեսությանը նախապես հաջողվել էր ձեռք բերել զեկուցագրի տեքստը, որտեղ թուրքական իշխանություններից պահանջվում է երկրում իսպառ վերացնել մահապատիժը, բարելավել բանտարկյալների վիճակն ու մարդու իրավունքները, վերջ դնել խոշտանգումներին եւ ձեւափոխել քաղաքական կուսակցությունների գործունեության մասին օրենքը:

Զեկուցագիրը միաժամանակ գոհունակությամբ էր արձանագրում Թուրքիայում սահմանադրական բարեփոխումների շրջանակներում երկրի սահմանադրության 33 հոդվածների վերանայումն ու Ազգային անվտանգության խորհրդի կազմում քաղաքացիական իշխանությունների ավելի մեծ թվով ներկայացուցիչների ընդգրկումը: Ինչ վերաբերում է զեկուցագրի Կիպրոսին առնչվող հատվածներին, ապա «Եվրոպական երկրները չեն թողնի, որ Թուրքիան Եվրոպայից օտարվի, ոչ էլ կհանդուրժեն նրա անդամակցությունը»:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲԱՆ

Կուբան ցանկանում է ԱՄՆ-ից պարեն եւ դեղորայք գնել

Վերջին կես դարում Կուբայում ստեղծված ծանրագույն տնտեսական կացությունն այդ երկրի ղեկավարությանն ստիպել է պարենի եւ դեղորայքի գնումների համար դիմել վաղեմի թշնամուն՝ ԱՄՆ-ին: Վերջերս Հավանան քաղաքավարությամբ հրաժարվել էր Վաշինգտոնի առաջարկած օգնությունից: Բայց գնումներին կուբացիները դեմ չեն: Որոքեր գործակալությունը տարածել է Կուբայի արտգործնախարարության հայտարարությունը, որտեղ մասնավորապես նշվում է. «Մեր երկրի համար օգտակար կլիներ, եթե Կուբայի հանրային ֆիրմաներին թույլատրվեր որոշակի հանգամանքով պարեն, դեղորայք եւ դրանց արտադրության համար անհրաժեշտ հումք ձեռք բերել»:

Կուբան եւ ԱՄՆ-ը պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ չունեն, եւ նրանց շփումներն իրականացվում են միջնորդավորված ձեւով: Կուբայի նկատմամբ ամերիկացիների հաստատած բեռնարգելքը գործում է արդեն չորս տասնամյակ:

Իսրայելը պարաշյուտներ կկաճառի ամերիկացիներին

Իսրայելի «Գալեյ-Ցահալ» բանակային ռադիոկայանի հաղորդման համաձայն, սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո ԱՄՆ-ում կտրուկ աճել է իսրայելական պարաշյուտների պահանջարկը: Ըստ որում, խոսքը ոչ թե ամերիկյան բանակի, այլ քաղաքացիական բնակչության մասին է: Բանն այն է, որ ամերիկյան առթիռավարական ընկերությունները ներկայումս հրաժարվում են երկարաձգել գրեթե բոլոր երկնաթռիչներում բնակվող անձանց կամ այնտեղ գործող գրասենյակների տերերի առթիռավարները: Առթիռավարական պայմանագրերի երկարաձգման նախապայմանն այժմ պարաշյուտի առկայությունն է: Հիշյալ ռադիոկայանը տեղեկացնում է, որ մարզական եւ ռազմական պարաշյուտներ արտադրող իսրայելական մի ձեռնարկություն պատրաստվում է մի քանի հազար պարաշյուտ առաքել ամերիկացիներին:

Պ. Ք.

Բուշը հուսախաբ արեց արաբներին. Պաղեստինի պետության հռչակումը հետաձգվեց անորոշ ժամանակով

Սիրիան ԱՄՆ խոստումներին լուրջ չի վերաբերվում

Ժամանակին Բուշ ավագն ու պետքարտուղար Բեյքերը ճնշում էին Իսրայելի քաղաքականությունը պաղեստինյան (Արեւմտյան ափ, Գազայի հատված) եւ արաբական (Լիբանանի հարավ, Գոլանի բարձունքներ) գրավյալ տարածքներում, հորդորում Թել Ավիվին դադարեցնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242, 338, 425 բանաձեւերը: Իրականում Վաշինգտոնը ոչ թե փորձում էր պաղեստինյան եւ արաբական խնդրի արդար լուծում գտնել, այլ դրանք շահարկելով, իր ներկայությունը եւ ազդեցությունը պահպանել այս տարածաշրջանում:

Թվում է, Բուշ ավագի ու Բեյքերի միջնորդական մարտավարությունն են որդեգրել Բուշ կրտսերը եւ պետքարտուղար Ք. Փաուելը: Մինչ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, ինչպես նշում էին ԱՄՆ պաշտոնյաները, Վաշինգտոնը նպատակ է ունեցել իբր ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ամբիոնից հռչակել Պաղեստինի պետությունը: Սեպտեմբերի 11-ի պատճառով հետաձգվեցին գլխավոր ասամբլեայի ամենամյա ճնարկումները, հետաձգվեց Պաղեստինի հռչակումը:

Ահա եւ եկավ նոյեմբերը. ԱՄՆ նախագահ Ջ. Բուշն անցնող շաբաթ ՄԱԿ-ի ամբիոնից իր ուղերձում հերթակա՞ն անգամ խոստացավ, թե Վաշինգտոնը կաջակցի միջնարեւելյան խաղաղ բանակցություններին, նշելով, թե դրանք հաջողություն կունենան, եթե վերջ տրվի շարունակվող բռնություններին: «Մենք սպասում ենք այն օրվան, երբ երկու պետությունները Իսրայելը եւ Պաղեստինը, կգոյակցեն խաղաղ պայմաններում՝ անվտանգ եւ ճանաչված սահմաններով, ինչպես պահանջում են ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւերը», ասաց Բուշը: ԱՄՆ նախագահի ուղերձն աղոտ էր եւ երկիմաստ, որեւէ ակնարկ չկար, թե ո՞վ է շարունակվող բռնությունների մեղավորը, ինչպե՞ս է հնարավոր դրանց վերջ դնել, ե՞րբ է ճանաչվելու Պաղեստինը: Փոխարենը, ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Կ. Ռայսը բռնությունների մեջ ուղղակիորեն մեղադրեց պաղեստինցիներին. «Չի կարելի դատապարտել «Ալ Ղաիդային», բայց հովանավորել «Հզբոլլահին»:

Իր հերթին, Պաղեստինի առաջնորդ Յասեր Արաֆաթը, որի հետ հանդիպելուց հրաժարվեց Բուշը, ՄԱԿ-ի ամբիոնից մեղադրեց Իսրայելին պայմանավորվածությունները խախտելու մեջ: «Ռաբինի սպանությունից հետո իսրայելցիները չեն կատարում պայմանավորվածությունները, Իսրայելի՝ պետական մակարդակով պաղեստինցիների նկատմամբ ահաբեկչությունը շարունակվում է: Իսրայելցի զինվորները սպանում են պաղեստինցի պաշտոնյաներին, կանանց, երեխաներին, շարունակում էքսցեսները», ասաց Արաֆաթը, նշելով, որ Պաղեստինի ճանաչումը երուսաղեմ մայրաքաղաքով միակ երաշխիքն է տարածաշրջանում կայունություն եւ խաղաղություն հաստատելու համար:

Պաղեստինա-իսրայելյան բանակցություններում եւ ընդհանրապես տարածաշրջանային գործընթացներում, բացի ԱՄՆ-ից, չափազանց կարեւոր է Սիրիայի դիրքորոշումը, առանց Դամասկոսի համաձայնության անհնարին է խոսել համապարփակ խաղաղության, կայունության մասին: Դիտորդների կարծիքով, երբ 1979 թ. Եգիպտոսը Իսրայելի հետ ստորագրեց Քեմփ Դեյվիդի համաձայնագիրը, իսկ 1994 թ. համագործակցության դաշնագիր կնքեցին Հորդանանն ու Իսրայելը, միջնարեւելյան խաղաղ գործընթացում Կահիրեի եւ Ամմանի կշիռը կտրուկ նվազեց, փոխարենն աճեց Սիրիայինը, որը ստանձնեց պաղեստինա-իսրայելյան հակամարտության արաբական կողմի ղեկավարությունը:

Սիրիայի պետական, քաղաքական շրջանակներում Պաղեստինի պետություն հռչակելու ամերիկյան խոստումներին լուրջ չեն վերաբերվում: Դամասկոսի կարծիքով, Վաշինգտոնը շարունակում է տարբեր պատճառաբանություններով խաղաղ բանակցությունները ձգձգելու մարտավարությունը, իսկ նրա ռազմավարական դաշնակից Իսրայելը ժամանակ շահելով ներգաղթող հրեաներով բնակեցնում է պաղեստինյան եւ արաբական հողերը:

«ԱՄՆ-ը դեռեւս չի հայտարարել, թե ձգտում է կյանքի կոչել ՄԱԿ-ի ԱԽ թիվ 242, 338 եւ 425 բանաձեւերը: ԱՄՆ-ը եւ Արեւմուտքը չեն ստիպում Իսրայելին իրականացնել այդ բանաձեւերը: Վարչապետ Ա. Շարոնը անընդհատ կրկնում է, թե ձգտում է խաղաղության, մինչդեռ իրականում ոչինչ չի անում, ընդհակառակը շարունակում է պաղեստինցիների հանդեպ հանցավոր քաղաքականությունը: Մենք մեր արժանապատվության հաշվին թշնամուն չենք զիջի թեկուզ մի կտոր հող», **«Ազգի»** հետ զրույցում ասաց Սիրիայի ամենաազդեցիկ թերթի «Թշրրինի» գլխավոր խմբագիր Խալաֆ ալ Ջարադը:

«Իսրայելը երկու հիմնական պատճառներով է շարունակում ռազմական գործողությունները պաղեստինցիների սպանությունները: Առաջին՝ որպեսզի պաղեստինցիները դադարեցնեն ինքնիշխան, երկրորդ՝ ժամանակ շահելով շուրջ 1 մլն հրեաների բնակեցնի զավթած տարածքներում՝ Արեւմտյան ափին, Գազայում, Գոլանում», մեզ հետ զրույցում նշեց «Սիրիա թայմս» օրաթերթի գլխ. խմբագիր Ֆ. Մարդուդը:

Սիրիացիները լուրջ չեն ընդունում նաեւ Յասեր Արաֆաթին, Պաղեստինի առաջնորդի հանդեպ վերջին տարիներին նրանց վերաբերմունքում փոփոխություն չի նկատվում: Սիրիացիներն Արաֆաթին ուղղակի արհամարհում են:

Հ. Գ. «Ազգի» թղթակցին այս հրապարակումը պատրաստելիս աջակցել են «Աստղ» ընկերությունը եւ ՀՀ-ում Սիրիայի դեսպանատունը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Դամասկոս

«Անուշի» հաղթական վերադարձը Միշիգանի օպերա

20 տարի հետո, նոյեմբերի 10-ին, «Անուշը» վերադարձավ Միշիգանի (Դետրոյթ) օպերայի բեմահարթակ, հաղթականորեն, այս անգամ՝ հայերեն, Թումանյանի բառ ու բանով: 1981 թ.-ին Արմեն Տիգրանյանի այս գլուխգործոցը մեծ ընդունելություն էր գտել, սակայն այս անգամ 2500 հոգանոց դահլիճը, որտեղ ասեղ գցելու տեղ չկար, հիացած էր: Վերսին ընդգրկելով իր ներկա սեզոնի երգացանկի մեջ, Բիզեի «Կարմենի», Վերդիի «Օթելլոյի» կողքին, Միշիգանի օպերայի տնօրինությունը ոչ միայն հարգանքի տուրք էր մատուցում նահանգի հայ համայնքին, այլ, ինչպես իր բացման խոսքում ասաց օպերայի տնօրենը, ծագումով իտալացի Դեյվիդ Դի Քիերան, երաժշտական արվեստի մի գոհար էր ներկայացնում երաժշտասերներին: Եվ իրոք, ներկաների մեջ շատ էին զուտ ամերիկացիները, իսկ հայերը եկել էին ոչ միայն նահանգի տարբեր քաղաքներից, այլեւ Չիկագոյից, Բոստոնից, Նյու Յորքից եւ անգամ Սան Ֆրանցիսկոյից:

Այո, ստեղծվելուց շուրջ 100 տարի հետո էլ Անուշի ու Սարոյի միամիտ ու անմեղ սիրո պատմությունը կարողանում է հուզել ժամանակակից հանդիսատեսին, անգամ հայ իրականությունից բոլորովին հեռու մարդկանց: Անշուշտ, դրա մեջ իր դերն ունի նաեւ պոեմին համահունչ ու համաձույլ երաժշտությունը: Կանադահայ համբավավոր դիրիժոր Ռաֆֆի Արմենյանի ղեկավարությամբ փորձառու նվագախումբն ու երգչախումբը ստեղծագործությունը կատարեցին ոգեշունչ նվիրումով: Գրական երկի եւ երաժշտական կտավի ամբողջական ըմբռնումով, գեղարվեստական պարզ ու խորհրդաւոր լուծումներով գործը ներկայացրել ու բեմադրել էր ֆրանսահայ հայտնի ռեժիսոր եւ դերասան Ժիրայր Փափազյանը, որին հաջողվել էր կուռ ամբողջություն ստեղծել բեմի վրա:

Անուշի դերակատարն էր արդեն միջազգային բեմերի զարդ դարձած Հասմիկ Պողոսյանը, Սարոյինը՝ վերջին ժամանակներս աչխարհի տարբեր բեմեր բարձրացող մեր հրաշալի տենորներից մեկը՝ Եղիշե Մանուչարյանը, իսկ Մոսինը՝ ռուս բարիտոն Յուրի Նիշաեւը՝ Մոսկվայի Մեծ թատրոնից:

Ներկայացումն ընդգրկված է Միշիգանի օպերային թատրոնի ներկա աշնանային երգացանկում, «Կարմենի», «Օթելլոյի», համաշխարհային այլ գլուխգործոցների հետ: Թատրոնի ներկա թատերաշրջանի գլխավոր հովանավորն է «Ֆորդ» ընկերությունը: «Անուշի» բեմադրության վրա ծախսվել է շուրջ 1,6 մլն դոլար, որի 400 հազար դոլարը հանգանակել է տեղի հայ համայնքը՝ գլխավորությամբ Ալիս Հայդաբյանի, Երվանդ Ազատյանի եւ Էդգար Հակոբյանի: Ավելին, ինչպես ներկայացման սկզբում հայտարարեց թատրոնի գլխավոր տնօրեն Դեյվիդ Դի Քիերան, հայ համայնքը հավաքել է 600 հազար, որից 200 հազարը որոշվել է հատկացնել Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի կարիքներին:

Ներկայացման բացման առթիվ հրատարակված էր բրոշյուր, որտեղ տրվել էին նախագահ Ռոբերտ Քոչարյանի շնորհավորագիրը, Ամենայն հայոց հայրապետի եւ այլ անձնավորությունների բարեմաղթանքները:

Բազմաթիվ հյուրերի շարքում ներկայացմանը յուր տիկնոջ հետ ներկա էր ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանը:

Ծաղրանկարչի աշխարհը

Ճանաչված ծաղրանկարիչ Գեորգի Յարալյանի հետ բազմաթիվ հարցազրույցներ են արվել: Այս մեկն էլ, թերեւս, առանձնապես ոչնչով չի տարբերվում եղածներից, եթե հաշվի չառնենք մի «փոքրիկ» նրբերանգ. հարցազրույցը տպագրվում է սիրված ծաղրանկարչի ծննդյան օրը: Սա նաեւ «Ազգի» յուրաքանչյուր շնորհավորանքն ու ընծան է մեր գործընկերոջը, որը 1997-ից ի վեր վրձինը ծառայեցնում է այս թերթի էջերին հավասարապես գոհացնելով թե քաղաքական, թե տնտեսական ու մշակութային ոլորտների թղթակիցներին: 74-ամյա ծաղրանկարչին, որի ժպտաչությանը կնախանձեր ցանկացած երիտասարդ, մաղթում ենք կրկնակի եռանդ ու երկար տարիների կյանք:

– Ե՞րբ եւ ինչո՞ւ դարձաք ծաղրանկարիչ:

– Վաղ մանկությունից նկարել եմ: Անխիր պատկերում էի ամենը, ինչն ինձ շրջապատում էր՝ մրգերից մինչ ծաղիկներ, առարկաներ: Մանկությունս Թբիլիսիում է անցել, եւ այդ քաղաքից բազմաթիվ վառ դրվագներ մինչ այսօր էլ բարձր են հիշողությանս մեջ: Այն հեռավոր տարիներն ինձ օգնեցին ի սկզբանե հարուստ գույներով տեսնելու աչխարհը, մարդկանց: Իսկ ծաղրանկարչի առաջին փորձեր արել եմ դեռեւս դպրոցում ուսանելիս: Դպրոցական կյանքը եւ ուսուցիչները, ի դեպ, պակաս հարուստ նյութ չեն դիտող աչքի համար, այստեղ պատանի սերունդն ինձ ավելի լավ կհասկանա: Ինչեւէ, առաջին ծաղրանկարիս «հերոսը» քիմիայի ուսուցիչս էր, որը «համարձակվել» էր ինձ դուրս վռնդել դասարանից: Այդ մանկական «վրեժն» էլ դարձավ ծաղրանկարչի իմ գործունեության սկիզբը... Հետո տեղափոխվեցինք Երեւան, ավարտեցի գեղարվեստաբաստեղծական (ինչպես այն ժամանակ կոչվում էր) ինստիտուտը: Ծաղրանկարչի մասնագիտությունն ընտրելով, սակայն, գեղանկարչությունը երբեք չթողեցի:

– Ինքնարտահայտվելիս խտություն չեք դրել ամենատարբեր ժանրերի ու ոճերի միջեւ՝ բնանկարից մինչեւ պլակատ, մանկական գրքերի պատկերազարդումից մինչ քաղաքական ու կենցաղային թեմաներով երգիծանկարներ: Ինչո՞վ եք բացատրում նման համակողմանիությունը:

– Թերեւս, ներքին պահանջ է, թելադրանք՝ երբեք չսահմանափակվել մեկ ժանրով, մեկ հետաքրքրությամբ: Բացի այդ՝ գեղանկարչի կրթությունն ինձ միշտ ուղղորդել, օգնել է: Ցավոք, ներկայումս շատերին թվում է, թե ծաղրանկարչությունը սոսկ աղավաղելու արվեստ է: Այնինչ ծաղրանկարչության հիմքը պիտի նկարչությունը լինի. նկարչական տեխնիկային, գրաֆիկային տիրապետելն օգնում է, որ խելացի, մտածված ու կոմպոզիցիոն առումով հիմնավորված «աղավաղվեն» երեւույթներն ու մարդիկ: Հանրահայտ մի փաստ հիշեցի ամերիկացի մեծահարուստ Ռոկֆելլերի կյանքից: Աբստրակտ արվեստի մեծ սիրահարն իր հավաքածուն մշտապես հարստացնում էր աբստրակցիոնիստ նկարիչների նորանոր ստեղծագործություններով: Սակայն աբստրակտ արվեստն ինքնին բարդ է, դժվար ընկալելի. ուրեմն, ինչպե՞ս տարբերակել արժեքավորն ու անարժեքը: Նա իր ծանոթ նկարիչներին նախ եւ առաջ «սովորական» գեղանկարչական աչխատանքներ էր պատվիրում, եւ եթե «գլուխ էին հանում»՝ այնժամ միայն գնում էր նրանց աբստրակտ ոճի աչխատանքները, քանզի դա արդեն չէր կարող խաբեություն լինել: Նույնն էլ ծաղրանկարչության պարագայում է...



– Ի վերջո, ծաղրանկարչությունը «բարի՞», թե՞ «չար» արվեստ է:

– Միանշանակորեն՝ բարի, թեպետ իր բնույթով սուր է, հեգնոտ, նույնիսկ՝ ինչ-որ չափով դաժան: Սակայն այս ամենն արդարացված է, քանզի պայքարում է ընդդեմ անընդունելի, բացասական երեւույթների, ուրեմն՝ ի սեր բարու:

– Հաճա՞խ է պատահում, որ Ձեր ծաղրանկարների «հերոսները» հեղինակից վիրավորվեն, լուրջ վերաբերվեն իրենց՝ երգիծանքի առարկա դառնալու փաստին:

– Այն էլ ինչքա՜ն: Ե՛վ վիրավորվել են, ե՛ւ բողոքել ու սպառնացել, թե կդիմեն բարձրագույն ղեկավարությանը. հատկապես խորհրդային շրջանում ենթադատվելու փաստին մեծ կարեւորություն էին տալիս: Սակայն անգամ նկարում էի Շիրազին, սակայն բողոքներն անցնում էին, իսկ ընկերական շարժը ո՛չ մի կերպ չէր սացվում: Ի վերջո հուսահատվեցի. «Վարպետ, չի սացվում...»: Շիրազը նայեց ու ասաց. «Շատ չնմանեցնես, թե չէ քեզ էլ կհալածեն...»:

– Մինչ օրս ստեղծագործում եք: Հոգնություն, ներքին սպառվածություն չե՞ք զգում:

– Ոչ, չեմ զգացել ու չեմ զգում: Երեւի այն պատճառով, որ միշտ վախեցել եմ այդ զգացումն ունենալուց: Երբ հոգնում եմ նկարելուց... միեւնույն է, նկարում եմ, պատկերում եմ այն ամենն, ինչը հաճելի է ինձ ու սիրելի: Նկարում եմ, քանի որ աչխատանքից եմ ստանում իմ կենսական ուժը...

Հարցազրույցը վարեց
ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մեկնարկեցին հայկական մշակութային օրերը

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում, միությունների տան Սյունաշարդ դահլիճում երեկ (նոյեմբերի 12-17-ը) մեկնարկեց հայկական մշակութային օրերի պաշտոնական բացումը՝ գլխավորությամբ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանի: Ինչպես նշեց ՀՀ մշակույթի նախարարության հասարակայնության հետ կապերի վարչության ղեկավար Գալուստ Հովսեփյանը, Մոսկվայում այդ օրերին համերգներով հանդես կգան «Սերենադ» կամերային նվագախումբը, Տիգրան Հեքեքյանի «Հայաստանի փոքրիկ երգիչները» երգչախումբը, «Բարեկամություն» պարային անսամբլը, ինչպես նաեւ օպերային թատրոնի անվանի մենակատարներ, այլ անհատ կատարողներ:

Մշակութային օրերի շրջանակներում, Մոսկվայի գրական գործիչների տանը կանցկացվի գրական պոեզիայի երեկո՝ նվիրված թարգմանական գրականությանը՝ ռուսերենից հայերեն եւ հակառակը:

Գ. Հովսեփյանի խոսքերով, այդ օրերին Մոսկվայի նկարչի կենտրոնական տանը կբացվի Ս. Փարաջանովի աչխատանքների եւ «Երեք սերունդ» խորագրով ցուցահանդեսները, որտեղ կներկայացվեն հայկական գեղանկարչության ավագ (Մ. Սարյան, Հ. Կոջոյան, Գ. Բաշինջաղյան), միջին (Հ. Հակոբյան, Է. Իսաբեկյան) եւ երիտասարդ (Գ. Բաղդասարյան, Ս. Համբարձումյան) սերունդների աչխատանքները:

Մոսկվայի «Խանջոնկովի տուն» կինոթատրոնում այդ օրերին տեղի կունենա հայկական ֆիլմերի փառատոն, որի ժամանակ կցուցադրվեն Ալբերտ Մկրտչյանի «Ուրախ ավտոբուս», Արման Մանարյանի «Ընկեր Փանջունի», Սուրեն Բաբայանի «Խելահեղ հրեշակը» եւ այլ խաղարկային կինոնկարներ:

Բեմում աշնանային ծաղիկներ էին...

Էմմա Վարդանյանի հոբելյանական երեկոն

Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր, Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան թատրոնի հիմնադիրներից մեկը՝ Էմմա Վարդանյանը, եղել է մեծն Ռուբեն Սիմոնովի Մոսկվայի հայկական ստուդիայի սանը: Բեմական առաջին քայլերն արել է Երեւանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում՝ Աստղիկ Աղասյանի, Սարգիս Քոչարյանի, Տիգրան Շամիրխանյանի ղեկավարությամբ: 27 տարի աչխատելով այդ թատրոնում, ստեղծել է անկրկնելի կերպարներ հայ, ռուս, եվրոպական դասական ու ժամանակակից պիեսներում:

1968-ին Երեւանի դրամատիկական թատրոնի հիմնադիր ու գեղարվեստական ղեկավար Հրաչյա Ղափլանյանը դերասանուհու հրավիրեց նորաբաց թատրոն: Սկսվեց նոր էջ Էմմա Վարդանյանի ստեղծագործական կյանքում: Վ. Շեքսպիր, Ֆ. Դոստոեւսկի, Ա. Չեխով, Ե. Օտյան, Հ. Պարոնյան, Հովհ. Թումանյան, Է. Օլբի, Ժ. Անույ, Օ. Իսելիանի, Է. դե Ֆիլիպպո, Պ. Զեյթունցյան, Ժ. Հարությունյան... Սա այն գրողների ոչ լրիվ ցանկը, որոնց պիեսներում նոր ուժով բացահայտվեց դերասանուհու տաղանդը:

60 տարի դերասանուհին բեմում է եւ, բնական է, հարազատ դրամատիկականում տեղի ունեցավ արտիստուհու հոբելյանական երեկոն:

Ճաշակով ձեւավորված բեմում դերասանուհու դիմանկարն է, նրա բեմական զգեստները: Հոտնկայս, բուռն, երկարատեւ ծափահարություններով դիմավորեց դահլիճը էլեգանտ հոբելյարին: Նրա մասին խոսք ասաց արձակագիր ու դրամատուրգ Պերճ Զեյթունցյանը: Գրողը նշեց Էմմա Վարդանյանի լավագույն դերակատարումները՝ Անտոնիդա Վասիլեւնա (Ֆ. Դոստոեւսկու «Խաղամոլը»), Մարգարիտ (Վ. Շեքսպիրի «Ռիչարդ III»), Նեմզար հանըմ (Ե. Օտյանի «Սեր եւ ծիծաղ»), պատմեց հետաքրքիր դրվագներ՝ կապված դրամատիկական թատրոնում իր պիեսների բեմադրության աչխատանքների, Հրաչյա Ղափլանյանի եւ Էմմա Վարդանյանի հետ:

Ընթերցվեցին հանրապետության վարչապետի, Երեւանի քաղաքապետի, Միխայիլ Ուլյանովի, Սոս Սարգսյանի, Ռաֆֆի Հովհաննիսյանի, «Պարադիզ» ընկերության շնորհավորական հեռագրերը: Հուզիչ էր հոբելյարի դստեր՝ Տաթեւիկ Ղափլանյանի եւ թոռան՝ Արսեն Խանդիկյանի նամակը ԱՄՆ-ից:

Շնորհավորական խոսքերով հանդես եկան ՀՀ մշակույթի նախարարության եւ թատերական գործիչների միության ներկայացուցիչները:

Ջերմ էր Գ. Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանի խոսքը, իսկ Էմմա Վարդանյան-Ռանեւսկայային (Ա. Չեխովի «Բալի այգին») ողջունեց Ֆիրս-Կարեն Զանգիրյանը:

Սրամիտ չաստուշկաներով՝ նվիրված Էմմա Վարդանյանին, ելույթ ունեցան ռուսական թատրոնի երիտասարդ դերասանուհիները:

Հաճելի անակնկալ մատուցեց հոբելյարին եւ դահլիճին Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի տնօրեն Գագիկ Ռոստոմյանը: Նա դերասանուհուն նվիրեց գահին նստած Էմմա Վարդանյան-տիկնիկ:

Հումորով էր «Նորք» երիտասարդական թատրոնի ողջույնը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արտաշես Հովհաննիսյանը պարգեւատրեց Էմմա Վարդանյանին «Տյուզ» հուշամրցանակով:

Հուզիչ էր պատանի հանդիսատեսի թատրոնի առաջատար դերասանուհի Նինել Պալլաֆյանի խոսքը, որը բնութագրեց Էմմա Վարդանյան մարդուն:

Եվ վերջապես բեմ են բարձրանում Երեւանի դրամատիկական թատրոնի դերասանները՝ ավագ, միջին եւ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները: Սիրելի խաղընկերուհուն դիմում է Գուժ Մանուկյանը: Իրենց ասմունքն են նվիրում Էմմա Վարդանյանին Ռուբեն Կարապետյանը եւ Արթուր Ութմազյանը:

Երեկոն, որը ջերմ ու անմիջական վարում էին Արմեն Խանդիկյանն (երեկոյի կազմակերպիչ եւ ղեկավար) ու Արթուր Ութմազյանը, մոտենում է ավարտին: Էմմա Վարդանյանը երգում է, երգում է ամբողջ հոգով, հուզում բոլորին: Երկար ժամանակ չեն դադարում բուռն ծափահարությունները:

Հնչում է վալսի մեղեդին, հոբելյարը պարում է բոլոր խաղընկերների հետ: Բեմում գեղեցիկ աշնանային ծաղիկներ էին:

ԳԱՐԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

Մարզական

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Արժանապատիվ մրցելույթներ թուրքական մրցահարթակում

Հայ ծանրոցորդները նվաճեցին մեկ ոսկե, երեք արծաթե եւ երկու բրոնզե մեդալ

Թուրքիայի Անթալիա քաղաքում ավարտվեցին ծանրամարտի աշխարհի տղամարդկանց 71-րդ եւ կանանց 14-րդ առաջնությունները: Առաջնության մրցելները վիճարկողների թվում էին նաեւ հայ դյուցազունները, որոնք արժանապատիվ ելույթներ ունեցան թուրքական մրցահարթակում: Առաջնության մասնակից Հայաստանի 6 ծանրոցորդներից երկուսը՝ Արսեն Մելիքյանը (77 կգ) եւ Գագիկ Խաչատրյանը (85 կգ) դարձան աշխարհի փոխչեմպիոններ, իսկ ընդհանուր առմամբ մեր դյուցազունները Թուրքիայում նվաճեցին 6 մեդալ (1 ոսկե, 3 արծաթե, 2 բրոնզե): Թիմային հաշվարկով ծանրամարտի ՀՀ հավաքականը գրավեց պատվավոր 4-րդ տեղը:

Հայաստանի հավաքականին վերջին 6-րդ մեդալը պարգեւեց մինչեւ 94 կգ քաշային ծանրոցորդների մրցավեճին մասնակցած Հակոբ Փիլոսյանը: Նա երկամարտի 400 կգ (182,5+217,5) արդյունքով գրավեց 4-րդ տեղը: Պոկում վարժությունում Հակոբն արժանացավ բրոնզե մեդալի: Առաջին վարժությունում միեւնույն 182,5 կգ արդյունք էին ցույց տվել Հակոբ Փիլոսյանը, նախկին գյումրեցի, ներկայում Ավստրալիայում բնակվող Ալեքսան Կարապետյանը եւ ադրբեջանցի Նիզամի Փաշաեւը: Վերջինս անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ դարձավ արծաթե մեդալակիր: Իսկ ոսկե մեդալը նվաճեց իրանցի Բահերին, որը դարձավ աշխարհի չեմպիոն երկամարտի 407,5 կգ (185+225,5) արդյունքով: Արծաթե մրցանակակիր դարձավ ադրբեջանցի Նիզամի Փաշաեւը՝ 405 կգ (182,5+222,5), իսկ բրոնզը բաժին հասավ լեհ ծանրոցորդ Շիմոն Կոլեսկին՝ 402,5 կգ (172,5+230): Կոլեսկին հրում վարժությունում արժանացավ ոսկե մեդալի՝ առաջ անցնելով 222,5 կգ արդյունքով 2-րդը եւ 3-րդը ճանաչված Փաշաեւից ու Բահերիից: Փիլոսյանն այս վարժությունում 6-րդն էր, իսկ Ալեքսան Կարապետյանը՝ 8-րդը: Ալեքսանը երկամարտի 392 կգ (182,5+210) արդյունքով գրավեց 6-րդ տեղը՝ անձնական քաշով զիջելով 5-րդ հորիզոնականը զբաղեցրած բուլղարացի Նիկոլ Ստոյանովին:

Ծանր քաշային ծանրոցորդների (մինչեւ 105 կգ) մրցումներում Հայաստանը ներկայացնող Ռաֆիկ Չախոյանի արդյունքը՝ 395 կգ (180+215) բավական համեստ էր: Երկամարտում նա 18 մասնակիցների մեջ գրավեց 12-րդ տեղը: Պոկում վարժությունում նրա ցուցանիշը 11-րդն էր, իսկ հրում վարժությունում Ռաֆիկը ցույց տվեց 13-րդ արդյունքը: Իսկ չեմպիոնի կոչմանն արժանացավ ռուսաստանցի Վլադիմիր Շմարչկովը՝ 422,5 կգ (197,5+225):

Արծաթե մեդալը նվաճեց թուրք ծանրոցորդ Բունիամին Սուդասը՝ 420 կգ (185+235), բրոնզե մրցանակակիր դարձավ ուկրաինացի Իգոր Ռազարյոնովը՝ 417,5 կգ (187,5+230): Պոկում վարժության մրցանակակիրներն են Շմարչկովը՝ 198 կգ, Ալեքսանդրու Բրասանը (Մոլդովա)՝ 190 կգ եւ Ռազարյոնովը՝ 187,5 կգ: Հրում վարժությունում մեդալները բաշխվեցին հետեւյալ կերպ. Սուդաս՝ 235 կգ, Ռազարյոնով՝ 230 կգ, Բրասան՝ 225 կգ:

Մրցումների վերջին օրն առաջնության պարգեւները վիճարկեցին գերծանրքաշայինները: Չեմպիոնի կոչմանն արժանացավ քաթարցի Սաիդ Սալեմ Զաբերը, որը երկամարտում ցույց տվեց 460 կգ (210+250) արդյունք: 2-րդ եւ 3-րդ մրցանակակիր դարձան ռուսաստանցիներ Ռոման Մեշչերյակովը՝ 445 կգ (205+240) եւ Ասլանտայի օլիմպիադայի չեմպիոն Անդրեյ Չեմյորկինը՝ 442,5 կգ (200+242,5): Մեշչերյակովի համար դա առաջին հաջողությունն էր նման խոշոր ստուգատեսում: Ռոմանը երկու վարժություններում էլ անձնական ռեկորդներ սահմանեց՝ արծաթե մեդալի արժանանալով նաեւ պոկում վարժությունում: Իսկ Չեմյորկինն առանձին վարժություններում էլ բրոնզե մեդալ նվաճեց: Շահած 5 մեդալը Ռուսաստանի հավաքականին հնարավորություն տվեց ընդհանուր թիմային հաշվարկով շրջանցել Թուրքիայի ծանրոցորդներին եւ 517 միավորով գրավել առաջին տեղը:

ՖՈՒՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

«Փյունիկը» ՀՀ խառակի չեմպիոն

Այն, որ «Փյունիկը» 23-րդ տուրում պաշտոնապես ձեւակերպելու էր չեմպիոնությունը, կարծում եմ, կասկած չէր հարուցում: Այդպես էլ եղավ, միայն թե հերթական 3 միավորը թիմի օգտին գրանցվեց առանց խաղադաշտ դուրս գալու: Աբովյանում «Արարատի» հետ նշանակված հանդիպումն այդպես էլ չկայացավ: «Արարատը», որքան էլ տարօրինակ է, խաղին չներկայացավ: Խաղի չկայանալու մասին զանազան խոսակցություններ էին գնում դեռեւս հանդիպման նախօրեին: Այն կարծիքն էր տարածված, որ ֆուտբոլիստների եւ ակումբի ղեկավարության միջեւ ծագած կոնֆլիկտի հետեւանքով խաղացողների մեծամասնությունը հրաժարվում է մասնակցել խաղին: Թեեւ մինչ այդ «Արարատի» ղեկավարությունը պաշտոնական գրություն էր ներկայացրել ֆուտբոլի ֆեդերացիա, տեղեկացնելով, որ ֆուտբոլիստների հիվանդության պատճառով հնարավոր չէ այդ խաղի անցկացումը: Սակայն ֆեդերացիան դա հիմնավոր պատճառ չէր համարել խաղը հետաձգելու համար: Ինչեւէ, «Արարատին» գրանցվեց պարտություն 0-3 հաշվով: Թիմում տիրող իրավիճակն (3 ֆուտբոլիստներ՝ Արա Նիգոյանը, Կարեն Բարսեղյանը, Արշակ Ամիրյանը, հետացվել են «Արարատից») իրոք մտահոգում է «Արարատի» երկրպագուներին: Վերջին հանդիպումներում «Արարատը» միավորների զգալի կորուստ ունեցավ եւ, փաստորեն, զրկվեց մրցանակային տեղ գրավելու հնարավորությունից: Չկայացավ նաեւ «Շիրակ»-«Լեռնագործ» հանդիպումը: Հյուրերը Գորիսում ավտոբուսի խափանման պատճառով չկարողացան մեկնել մրցավայր: Մնացած երեք հանդիպումներում հաջողությունն ուղեկցեց դաշտի տերերին:

Եվ այսպես, «Փյունիկը» 4-րդ անգամ դարձավ ՀՀ չեմպիոն, ինչը ռեկորդային ցուցանիշ է հայաստանյան թիմերի մեջ: «Փյունիկի» հաջողությունն օրինաչափ է: Ողջ մրցաշրջանի ընթացքում նորընծա չեմպիոնը գրագետ խաղ ցուցադրեց՝ աչքի ընկնելով գրոհների արդյունավետությամբ եւ խաղացողների բարձր վարպետությամբ: Հաջողության առթիվ շնորհավորում ենք ֆուտբոլային կոլեկտիվին եւ սպասում հաջող մրցելույթների միջազգային մրցաստարեզներում:

Խաղերի արձանագրություններից

«Սպարտակ»-«Ղարաբաղ»՝ 3-0 (1-0)

1-0՝ Արամ Հակոբյան (7), 2-0, 3-0՝ Հայկ Հակոբյան (56, 62):

«Բանանց»-«Դինամո»՝ 2-0 (2-0)

1-0՝ Գագիկ Սիմոնյան (19), 2-0՝ Արթուր Մինասյան (29)

«Կոտայք»-«Լոռի»՝ 3-0 (1-0)

1-0՝ Տիգրան Դավթյան (17), 2-0, 3-0՝ Լիպարիտ Մարկոսյան (65, 89)

«Արարատ»-«Փյունիկ»՝ -: + (0-3)

Մրցաշարային աղյուսակ

		Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.	Փյունիկ	19	17	1	1	74-16	52
2.	Զվարթնոց	20	14	0	6	43-17	42
3.	Սպարտակ	19	12	3	4	45-14	39
4.	Շիրակ	18	11	4	3	42-17	37
5.	Արարատ	19	11	2	6	35-19	35
6.	Միկա	19	9	5	5	34-19	32
7.	Բանանց	20	8	4	8	38-26	28
8.	Լեռնագործ	18	5	3	10	23-49	18
9.	Դինամո	19	4	4	11	17-38	16
10.	Ղարաբաղ	19	2	5	12	15-54	11
11.	Կոտայք	19	2	3	14	17-58	9
12.	Լոռի	19	1	2	16	15-72	5

Ռմբարկուներ

Արման Քարամյան	«Փյունիկ»	20
Հայկ Հակոբյան	«Սպարտակ»	13
Միհր Ավանեսյան	«Զվարթնոց»	12
Արամ Հակոբյան	«Սպարտակ»	10
Սարգիս Նազարյան	«Զվարթնոց»	10
Վարդան Մինասյան	«Փյունիկ»	9
Հայկ Հարությունյան	«Փյունիկ»	9
Արմեն Մարկոսյան	«Միկա»	9
Արամ Ոսկանյան	«Փյունիկ»	8
Մկրտիչ Հովհաննիսյան	«Բանանց»	8
Տիգրան Դավթյան	«Շիրակ»	8
Անդրեյ Բուլանով	«Միկա»	8
Արարատ Հարությունյան	«Շիրակ»	8
Գալուստ Պետրոսյան	«Դինամո»	8

ՖՈՒՏԲՈԼ

Հինգ ուղեգրերի համար մրցավեճը շարունակվում է

Հանգստյան օրերին կայացան ֆուտբոլի աշխարհի առաջնության 5 ուղեգրերի համար անցումային առաջին հանդիպումները: Առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Կիեւում Ուկրաինայի եւ Գերմանիայի հավաքականների մրցավեճը: Դաշտի տերերը ակտիվ սկսեցին հանդիպումը եւ արդեն առաջին րոպեներին կարող էին բացել հաշիվը, սակայն Վորոբեյը մեն-մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, հարվածեց դարպասի ձողին: Շարունակելով գրոհները, ուկրաինացիները 18-րդ րոպեին հասան իրենց նպատակին. տուգանայինի խաղարկումից հետո Զուբովը գրավեց հյուրերի դարպասը: Բաց թողած գոլը ստիպեց հյուրերին ակտիվացնել հարձակողական գործողությունները, որոնց շնորհիվ Գերմանիայի հավաքականը մի քանի վտանգավոր պահեր ստեղծեց մրցակցի դարպասին: Նախ գնդակը դիպավ դարպասի ձողին, ապա Ոյոմերի հարվածից հետո Զուբովը գնդակը հանեց դատարկ դարպասից: Սակայն չանցած 2 րոպե տուգանայինի խաղարկումից հետո Բալլակը վերականգնեց հավասարակշռությունը: Քիչ անց Շեւչենկոն կարող էր առաջ մղել իր թիմին, սակայն վերջին պահին Ոյոմերը փրկեց դրությունը: Երկրորդ խաղակեսում երկու թիմերն էլ շատ ջանք թափեցին հաշվի մեջ առավելության հասնելու համար, սակայն ապարդյուն: Ոչ-ոքի արդյունքը, իհարկե, ձեռնտու էր գերմանացիներին, որոնց նոյեմբերի 14-ին Դորտմունդում կայանալիք խաղում ուղեգիրը նվաճելու համար բավարարում է նույնիսկ 0-0 հաշիվը:

Թուրքիայի հավաքականը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց ավստրիացիներին եւ հիանալի հնարավորություն ստացավ 2-րդ անգամ մտնելու եզրափակիչ: Միակ գնդակը 61-րդ րոպեին խփեց Օկան Բուրուկը: Հերս Վերխեյենի խփած գոլն էլ բելգիացիներին հաղթանակ պարգեւեց չեխերի հետ խաղում: Սլովենիայի ֆուտբոլիստները սեփական հարկի տակ կամային հաղթանակ տոնեցին Ռումինիայի հավաքականի նկատմամբ (2-1): Իռլանդացիները 2-0 հաշվով պարտության մատնեցին իրանցիներին:

Մարադոնայի հրաժեշտի խաղը

Արգենտինացի աշխարհահռչակ ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնան, որն իր վիրտուոզ խաղով տարիներ շարունակ միլիոնավոր ֆուտբոլիստների ուրտերն էր նվաճել՝ հանդիսանալով նրանց կուռքը, պաշտոնապես հրաժեշտ տվեց մեծ

ֆուտբոլին: Հրաժեշտի պահը միշտ էլ հուզիչ է, իսկ երբ մեծ ֆուտբոլը թողնում է ֆուտբոլային լեգենդը, կրկնակի հուզմունք ու տխրություն է համակում մարզասերներին: 40-ամյա Դիեգո Մարադոնայի պատվին Բուենոս Այրեսում ֆուտբոլային մեծ շոու-հանդիպում էր կազմակերպվել Արգենտինայի եւ աշխարհի հավաքականների մասնակցությամբ: Երբ 10 համարի մարզաշորթիկով Դիեգո Մարադոնան խաղադաշտ դուրս եկավ, լեփ-լեցուն տրիբունաները հոսընկայս դիմավորեցին հոչակավոր ֆուտբոլիստին՝ իրենց բացականչություններով ողջունելով նրան: Ֆուտբոլային շոուն ստացվեց: Հանդիսականներն ականատես եղան ֆուտբոլային մի հիանալի ներկայացման, որի գլխավոր հերոսը Մարադոնան էր: Ճիշտ է, արագությունն այն չէր, սակայն պահպանվել էին վիրտուոզ տեխնիկան, գնդակի նուրբ փոխանցումները: Ընդհանուր առմամբ խփվեց 9 գոլ. արգենտինացիները հաղթեցին 6-3 հաշվով: Երկու գոլ խփելու հնարավորություն էլ ընձեռեցին Մարադոնային, որն անվրեպ իրացրեց 11 մ հարվածը: Դա մեծ ֆուտբոլում Մարադոնայի վերջին գոլն էր: Անվանի ֆուտբոլիստին իրենց ուսերի վրա պահած խաղի մասնակիցները պատվո շրջան կատարեցին մարզադաշտում: Այնուհետեւ սկսվեց շնորհավորանքների, նվերներ հանձնելու երկար շարանը:

Դիեգո Մարադոնան իրոք երեւույթ էր ֆուտբոլում, որին համեմատում էին ֆուտբոլի արքա Պելեի հետ: Եվ թեեւ կյանքում նրա որոշ տարօրինակություններին, Մարադոնան խաղադաշտում տաղանդավոր ֆուտբոլիստ էր:

Մրցում են նաեւ երիտասարդները

Կայացան նաեւ Եվրոպայի երիտասարդական առաջնության 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները: Սա գրանցված արդյունքները.

Խորվաթիա-Չեխիա	1-1
Լեհաստան-Իտալիա	2-5
Շվեդիա-Բելգիա	3-2
Հունաստան-Թուրքիա	3-0
Հոլանդիա-Անգլիա	2-2
Ռումինիա-Ֆրանսիա	0-1
Իսպանիա-Պորտուգալիա	2-1
Ուկրաինա-Շվեյցարիա	1-2

Պատասխան հանդիպումները կկայանան նոյեմբերի 13-14-ին:

Մեքսիկայի հավաքականը եզրափակիչում

Մեքսիկայի հավաքականը 3-0 հաշվով հաղթելով Հոնդուրասի ընտրանուն, դարձավ ֆուտբոլի աշխարհի առաջնության 25-րդ մասնակիցը: Մինչ այդ ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտուց ուղեգրերի տեր էին դարձել Կոստա Ռիկայի եւ ԱՄՆ-ի հավաքականները: Նրանց մասնակցությամբ վերջին տուրի հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ՝ Տրինիդադ եւ Տոբագո-ԱՄՆ՝ 0-0, Ջամայկա-Կոստա Ռիկա՝ 0-1:

ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ

«Միկան» մեկ տարով զրկվել է եվրագավաթների մասնակցությունից

«Ազգը» ժամանակին տեղեկացրել էր, որ այս տարվա օգոստոսի 23-ին Երեւանում կայացած ՈՒԵՖԱ-ի գավաթի «Միկա»-«Բրաշով» պատասխան հանդիպման նորվեգացի մրցավարը ՈՒԵՖԱ ներկայացրած իր զեկույցում «Միկա» ակումբի ղեկավարությանը մեղադրել էր իրեն կաշառելու փորձի համար: ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն քննարկելով այդ միջադեպը, որոշում է կայացրել «Միկային» մեկ տարով զրկել ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերի մասնակցությունից: Նույն ժամկետով որակազրկվել է նաեւ ակումբի նախագահ Գրիգորի Կագրամանովը:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԲԱՔՈՒ

Հակասական կարծիքներ համանախագահների այցից հետո

ԲԱՔՈՒ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ադրբեջանի արտաքին հարաբերությունների հարցերով Ալիեւի խորհրդական Նովրուզ Մամեդովը հայտարարել է, թե Ադրբեջանը մերժում է Ղարաբաղյան կարգավորմանն ուղղված Մինսկի խմբի նոր գաղափարները, համարելով դրանք անընդունելի: Ինչպես հաղորդում է «Ազատությունը», Մամեդովը նշել է, որ համանախագահների առաջարկները որեւէ նոր բան չեն պարունակում, «իսկ այդ գաղափարների հիմքում դրված հին, այսպես կոչված, փարիզյան սկզբունքները եւս անընդունելի են, քանզի դրանք չեն բխում Ադրբեջանի ազգային շահերից»: Քաղաքագետ Նուրանիի համոզմամբ, համանախագահների գործունեությունը ոչ միայն արդյունավետ չէ, այլ նույնիսկ վտանգավոր է տարածաշրջանի համար: Ըստ նրա, երեւանում ու Բաքվում համանախագահները իրարամերժ հայտարարություններ են արել, իսկ նախագահ Ալիեւի ներկայությամբ հերքել վերջինիս հայտարարությունները: Ալիեւը լռել է, ինչը խիստ վիրավորական է Ադրբեջանի համար:

Ըստ Ադրբեջանի նախկին պաշտպանության նախարար Մեհտիեւի, հատկապես վիրավորական է ադրբեջանական բանակի բարոյալքվածության մասին համանախագահների հայտարարությունը, որով փաստորեն հայերին կոչ է արվում հարձակվել, քանի որ ադրբեջանցիները ոչինչ անել չեն կարող: Մեհտիեւը կոչ է անում համախմբվել նախագահ Ալիեւի շուրջ եւ ռազմական ճանապարհով լուծել Ղարաբաղյան հարցը:

Նախկին արտգործնախարար Թոֆիկ Զիլֆուգարովը ասել է, որ եթե ադրբեջանցիները հետեւեն Մեհտիեւի խորհրդին, արդա փոքրիկ տարածաշրջանում կսկսվի մեծ պատերազմ, որին երկու կողմից կմասնակցեն ավելի քան 500 հազար զինվորներ, մի քանի տասնյակ հազար զրահամեքենաներ, հազարավոր հրասայլեր, հարյուրի չափ ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ, ինչը անշրջելի կործանարար հետեւանքներ կունենա ամբողջ տարածաշրջանի համար, եւ համանախագահները ինչ-որ նոր առաջարկներով փորձում են կանխել նման զարգացումները:

ՀԱՄԱՌՈՏ

Հարձակում Քաբուլի շրջանում

ՄՈՍԿՎԱ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Նոյեմբերի 12-ի վաղ առավոտյան Հյուսիսային դաշինքի ստորաբաժանումները զանգվածային հարձակում են սկսել Քաբուլի շրջանում: Ինչպես հաղորդում է ՕՌՏ-ն, Հյուսիսային դաշինքի արտաքին գործերի նախարար, դոկտոր Աբդուլլան հայտարարել է, որ դաշինքը մտադիր է շարունակել հարձակումը թալիբների դիրքերի վրա նույնիսկ մուսուլմանների համար սրբազան ռամադանի ամսին:

Գերեվարված են 2000 թալիբներ

ԴՈՒՇԱՆԲԵ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ավելի քան երկու հազար թալիբներ են գերեվարվել կիրակի օրը՝ Բաղլանի նահանգի համար մղված մարտերում: Այս մասին տեղեկացնում են Դուշանբեի աֆղանական դեսպանությունում:

Երրորդ մեղադրանքը Միլոշեւիչի դեմ

ՀԱԱԳԱ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Երկուշաբթի Հաագայի միջազգային տribունալի ննիչները դատավորներին են ներկայացրել ՀՄՀ նախկին նախագահ Սլոբոդան Միլոշեւիչի գործով երրորդ մեղադրական եզրակացությունը: «Ռոյթեր» գործակալության համաձայն, դա Միլոշեւիչի դեմ տribունալի առաջադրած մեղադրանքներից վերջինն է, որի ծեւակերպումն է՝ Բոսնիայի խաղաղ բնակչության ցեղասպանություն 1991-1995 թթ. պատերազմի ժամանակ:

ԴՈՒՔ ԲԱԺՆԵՏԵՐ ԵՔ

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան հիշեցնում է.

ՀՀ օրենսդրության համաձայն, բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի սեփականության իրավունքը ծագում է այն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում գրանցելուց հետո:

Բաժնետերերի սեփականության իրավունքի պաշտպանության եւ երրորդ անձանց չարաշահումներից բաժնետերերին զերծ պահելու նպատակով, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան անվճար տրամադրում է սեփականությունը հավաստող համապատասխան փաստաթղթեր (հաշվից քաղվածքներ):

Այցելեք Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա՝ ք. Երեւան, Հանրապետության 5բ կամ դիմեք Ձեզ սպասարկող բրոքերային ընկերությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 54-36-56 կամ 58-91-51:

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցի պող. կենտրոնական մասում վաճառվում է օրիգինալ դիզայնով, կաղիսալ նորոգված մոտ 1000 քմ առեւտրային եւ հանրային սննդի տարածք: Մեկնարկային գինը համարժեք է 497.000 ԱՄՆ դոլարին: Աճուրդը կայանալու է 24.11.01 թ. Թեքեյան կենտրոնում: Աճուրդը հայտարարվել է 27.10.01 թ. պաշտոնական ծանուցմամբ «Դելովոյ էքսպրես» թերթում: Մանրամասների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ, հեռ.՝ 559501, բջջ. 400749, auction@legal.am:

For Your Internal News of Armenia
Log on to
www.azg.am
In English, Russian, Armenian and Turkish

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելի» կողմից հոկտեմբերի 11-ին եւ 12-ին հայտարարած ցանցային սարքավորումների մատակարարման համար մրցույթի փակման օրը երկարաձգվում է 14 օրով: Այսպիսով, նշված մրցույթի վերջին ժամկետն է 2001 թ. նոյեմբերի 26-ը:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆՏԵԼԸ» ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

«Արմենտելը» նախօրոք տեղեկացրել էր, որ Հայաստանում ֆրիսոնության հոչակման 1700-ամյակի առթիվ բոլոր ֆիզիկական բաժանորդները, որոնց հեռախոսահամարները մինչեւ ս. թ. հուլիսի 1-ը հանված էին պարտքի պատճառով, աննախադեպ հնարավորություն կունենան մինչեւ հոկտեմբերի 31-ը վերամիացնել իրենց հեռախոսահամարները 24.000 դրամի փոխարեն վճարելով ընդամենը 6.000 դրամ:

Այժմ «Արմենտելը» հայտարարում է, որ այդ վերականգնումների գործընթացը երկարացվում է մինչեւ 2001 թ. դեկտեմբերի 31-ը:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԵՔՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑ ԱՃՈՒՐԴ

Երեւանի քաղաքապետարանը հայտնում է շահագրգիռ անձանց, որ Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 02-ին «Ազգ» թերթում հայտարարված աճուրդները երրորդ եւ չորրորդ հողամասերի վարձակալության պայմանագրի կնքման իրավունքի համար՝ պոտենցիալ մասնակիցների խնդրանքով հետաձգվում են եւ անցկացվելու են համապատասխանաբար 2001 թ. նոյեմբերի 27-ին եւ դեկտեմբերի 04-ին, ժ. 18.00-ին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ» իրավաբանական գրասենյակ ք. Երեւան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն, IV հարկ, հեռ. 559501, 559502, բջջ. 400749, էլ-փոստ auction@legal.am:

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

Արդինբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
հեռ.՝ 542674

Արմենբրոկ ՓԲԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
հեռ.՝ 528986

Գլինկես ՍՊԸ
ք. Երեւան, Ռոստոմյան 21, բն. 41
հեռ.՝ (09) 429412

Դամոս ՍՊԸ
ք. Երեւան, Ե. Քոչար 21/1, բն. 37
հեռ.՝ 571218

Արժեթղթեր Կենտրոն ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
հեռ.՝ 525801, 581578

Ինտրբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
հեռ.՝ 222725, 278469

Գլինկյան Բրոքեր ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 45ա
հեռ.՝ (051) 40297

Կամ Եռանկյունի ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
հեռ.՝ (051) 22422

Գլոբալ Բրոք Պիկ Տրաստ ՍՊԸ
ք. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
հեռ.՝ 348837

Գոլդ-Գլոբես ՓԲԸ
ք. Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
հեռ.՝ 525822

Երեւան-Բրոքեր ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
հեռ.՝ 524357, 151820

Էյլեն-Գլոբես ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50, բն. 26
հեռ.՝ 528232, 540914

Գլոբեսթիս ՓԲԸ
ք. Երեւան, Չարյան 8, բն. 30բ
հեռ.՝ 567767, 582478, 562404

Կամիտաս-Գլոբես ՍՊԸ
ք. Երեւան, Ազաթանգեղոսի 7
հեռ.՝ 569680, 526417

Կամիտաս-Մենեջմենթ ԲԲԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
հեռ.՝ 560138

Կամիտաս-Տրաստ ՓԲԸ
ք. Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
հեռ.՝ 580745

Ս.Գ.Ս. ՍՊԸ
ք. Գյումրի, Սբովյան 242-1
հեռ.՝ (041) 22184, (051) 23109

Լորդ-Վեստ-Գլոբես ՍՊԸ
ք. Գյումրի, Սբովյան 247
հեռ.՝ (041) 30868

Գրինվեստ-Գլոբես ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50/ 26
հեռ.՝ 521812, 521051, 528778

Մարբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Գայի 24
հեռ.՝ 630480, 542547

Վրինկո ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24, բն. 5
հեռ.՝ 531805

Տոնսոն ՍՊԸ
ք. Երեւան, Դեղտասն 2
հեռ.՝ 545477, 545407

Օրիգինալ-Գլոբես ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց 5ա
հեռ.՝ (09) 420449

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. նոյեմբերի 12-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հայտ. ABBR	Հարթակ Listed	Գնում* Bid: Լավագույն գին Best price	Գնում* Bid: Միջ. կշռ. գին Avg. price	Գնում* Bid: Ծավալ Total qnt.	Վաճառք* Ask: Լավագույն գին Best price	Վաճառք* Ask: Միջ. կշռ. գին Avg. price	Վաճառք* Ask: Ծավալ Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: Նվազ. գին Day low	Առավ. գին Day high	Միջ. կշռ. գին Avg. price	Փոփ.% Avg%	Ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՅՐՈՒՄԻ ՊԱՀԱՇՈՆԵՐԻ ԳՆ	APAH	B											
ԱՊԱՍԵԿՈՒՄԻՆ	APAK	B											
ԱՐԴՎԻՆ ԷԼ.ՄԵԽ.ԳՆ (ՎԱՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱՍԵՎԱՆ	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
ԱՍՏԵՂԱՄԱՇԿ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԳՆ	AVAG	B											
ԱՎԻԱՀԱՄԱԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	80								
ԱՎՏՈԲԵՌԻՆԳ	AVTB	B											
ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԳՆ	AVTM	B	300.0	300.0	1								
ԻՊԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ Կ/Տ	BENT	B											
ԲՅԵԼ-ՊԼԱՍՏԱ	BHSP	B											
ՉԱՐԵՆՑ ԳՈՐԾԻՔԱՐԻՆ ԳՆ	CHGG	B											
ԿՈՄՏՍԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ	CPMT	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՐՏ. ՁՐ ՄԿ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵԽ. ԳՆ	DBJG	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ՍՈՂՈՂ. ՀԼ	DJAH	B											
ՉՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐՈԵՆԳԱՐԻՏՍԱՐՔ	ECHS	B											
ԷՅՄԻԱԾԻՆ ՍԱՐՔԱՇԻՆ. ԳՆ	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳՆ	EELJ	B											
ԵՐՏԵՔ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՅԱՂՈՐԴԱԿ ԳՆ	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ	EJWG	B											
ԵՐԿԱՔԵԵՏՆ.7	EKB7	B											
ԵՐ. ԿԵՆՏԱՌԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՆ	EKQG	B	400.0	400.0	100	900.0	900.0	33					
ԷԼԵԿՏՐԱՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՄԱՆՏԺ	ELMJ	B											
ԵՂՎԱՐԴԻ ՍՄԿՇԿՈՒԿՆԵՐԻ Ֆ/Ա	EMKFCO	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՔՍՈՐ	EMQR	B											
ԵՄՏԱ	EMTA	B											
ԷՅՄԻԱԾԻՆ ՊԼԱՍՏԱՍ. ԳՆ	EPLG	B											
ԵՐԱԶ	ERAZ	B											
ԵՐ. ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԳՆ	ERJG	B	1,350.0	1,350.0	20								
ԵՐԿԱՔԵԵՏՆ	ERKB	B											
ԵՐ. ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՆ	ESHG	B	450.0	450.0	129				1,000.0	1,000.0	1,000.0		416.0
ՍՆԱԳԻՏ ԵԵՏ. ԳՆ (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	5								
ՎԱՆ ԱՅՖ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ - 1	EVGI	B											
ՍԱՆՎ	GANV	B											
ԳՈՐԾԻՔ ԳԱՄՄ	GGAM	B											
ԳԵԳԱՄ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻ ՄՍԻ ՊԱՀԱՇՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԻՇ	HASH	B	100.0	100.0	9,410								
ՀԱՏԿ	HATC	B											
ՀԱՅՇԱՍԱՆՏ	HATS	B	1,800.0	1,539.1	46								
Հ.Է.Ղ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔՈՄՍԵՔԵՆԱ	HQMQ	B											
ՀԱՅՔ.ՇԻՆՍԱՆԱԳԾ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՄՈՒՐՋԵՒՆ	KMSH	B											
ԿԱՆԿԱ	KNKA	B											
ՌԵԼԵ ԳՆ (ԿԱՊԱՆԻ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՆ	MQER	B	2,220.0	2,220.0	5								
ՄԱՐՏՈՒՆԻՇԻՆ	MRSH	B											
ՄԵՐՇՈՒՄԿՈՎՅԱՆ	MSKV	B											
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	MSTB	B	400.0	400.0	10								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՐԲՐԱՇԵՆԻ ՏՐԻԿՈՏԱԺ Ֆ/Ա	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌԱՍՏՐ ԳՆ	RSTR	B											
ՌԵՁՈՒՍՏՐ	RZTR	B											
ՍԵԼԵԼԿ	SELN	B											
ՇԻՆՄԵՔԵԼԱՆՈՐԳԱՒՍ	SHMN	B											
ԵՐ. ՇՈՒՇԱՆ ՏԵՔՍՏԻԼ Կ/Տ	SHTK	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ. ԳՆ	SKSG	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐՇԻՆ	UKSH	B											
ՍԻՍՏԵՄԱՅԻ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ա	VAKF	B											
ՎԱԿՈՒՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՎԱՌ. ԳՆ	VEVG	B											
ՎՇՆՇԻԿ	VSHK	B											
ՎՏՍՍՄԻՆՆԵՐԻ ԳՆ	VTMG	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐԵՎԱՆ-ԿԱՀՈՒՅՔ	YKHQ	B											
ԵՐ. ՊԱՀԱՇՈՆԵՐԻ ԳՆ	YPHG	B											
ԵՐ. ՌԵԼԵԻ ԳՆ	YRLE	B											

* Գրավաճառված գնման/վաճառքի հայտերի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:
** 4 կամ ավելի կնքված հարաբերակցությամբ դա բաժնետիրական ընկերության հաստատուն անդամակցության բաժնետոմսի հարաբերակցությունն է: Այն դեպքում, երբ 4 կամ ավելի բացի նշված է CO, արդյունքում դա ՍՊԸ-ի բաժնեմասն է:
Այլ տեղեկությունները հրատարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 12. 11. 2001 Գինը՝ 100 դրամ